Գուրգեն Մահարի

Ծաղկած փշալարեր

13

Մամոն դուրս եկավ պատժարանից, ինչպես թակարդից են դուրս գալիս՝ նիհարած, գզգզված, աչքերը դեռ վախով լեցուն: Դուրս եկավ Մամոն, մտավ բարաք, բարձրացավ, նստեց նառին և ասաց .

— Աբաստումանցի ֆայթոնչի Մամոն Բորժոմ հյուր էր գնացել, եկավ: Ինչ ունեք-չունեք՝ մեյդան բերեք:

Մենք Մամոյին ընդունեցինք ուրախ դեմքով, ավելի շուտ՝ կեղծ, քան իսկական ուրախությամբ: Մի օր առաջ մի երկտող էինք ստացել Լյուդմիլայից, ուր նա գրում էր, որ երեխան հիվանդ է: Այո, այո, Մամոն հիմա երեխայի հայր է . ի՞նչ անենք, որ երեխան հիվանդ է . դրսում, ազատության մեջ երեխաները չե՞ն հիվանդանում . . . ճիշտ էր գուշակել Մամոյի սիրտը, տղա էր նորածինը:

Մամոն տեղյակ էր ծնունդի մասին, սակայն հիվանդության մասին՝ ոչ: Մենք նրան ոչինչ չասացինք: Աշոտ դային վերցրեց իր ամանը, գնաց խոհանոց, բռնեց Մեսրոպի օձիքը և վերադարձավ մի կտոր հացով ու ապուրով: Այնուհետև Աշոտ դային երկու քառակուսի կտոր շաքար տվեց Մամոյին իր ծանրոցի մնացորդից . Մամոն ուտելուց հետո մի կտորով երկու բաժակ եռացրած ջուր խմեց, իսկ մյուս կտորը դրեց գրպանը:

— Շյո՛ւքր ալլահին, — ասաց նա, — բանտից ազատվեցի . . .

Յատուկ Պոէմ

Սկսեցինք խոսել դեսից-դենից և չնայած որ բոլորս էլ մտքով առաջին ճամբարային կետում էինք, բայց, կարծես խոսքը մեկ արած, խոսում էինք չեզոք նյութերի մասին: Միայն Մամոն մի անգամ, ի միջի այլոց, մտահոգվեց մի-երկու բաժին հաց ճարելու և ծննդկանին ուղարկելու մասին: Թվաց, որ Աշոտ դային չլսե՛ց Մամոյի կցկտուր խոսքերը . նա զբաղված էր իր գրպանի փողերը հաշվելով: Հետո նա վար իջավ ու գնաց:

Ճամբարում նույնպես լինում են առօրյա գործեր, որոնք բարեհաջող լուծում են ստանում շնորհիվ չնախատեսված, ուղղակի զարմանալի զուգադիպությունների: Այդպես բարեհաջող կերպով կատարվեց իմ ճամբարային առաջին կետ գնալու վաղուցվա ցանկությունը: Դրա համար պետք էր, որ մեր նկարագրած այդ երեկոն շաբաթ լիներ, հետևաբար հաջորդ օրը՝ կիրակի, երբ բաժանմունքի գրասենյակային աշխատողների ազատ օրն էր, այնինչ Աշոտ դային . . .

Քիչ հետո Աշոտ դային եկավ երկու բաժին հացով և մի տեսակ հանկարծակիի եկած մարդու դեմքով: Նա հացը դրեց արկղին և՝

— Ախր, ես մոռացա, որ վաղը կիրակի է . . . սանիտարից գնեցի և մտածում էի վաղը ուղարկել . . . Ճիշտ այդ րոպեին բարաք մտավ կարգադրիչ Սիդորովը և կանչեց .

— Բալաշո՛վ . . .

Բալաշովն աշխատում էր գործարար բակում . նա և՛ հյուսն էր, և՛ ապակի գցող, և ներկարար . . . հաճախ նրան առանձին կամ գրասենյակային աշխատողների հետ ուղարկում էին առաջին կետը: Ինչպես ասում էին՝ «ճեղքվածքները փակելու համար»: Աշոտ դային վեր թռավ տախտակամածից և կանգնեց մի քիչ հեռու Սիդորովից, որն այդ րոպեին զբաղված էր Բալաշովի հետ խոսելով: Երբ կարգադրիչը վերջացրեց իր խոսակցությունը և խավատախտակի վրա ինչ-որ նշանակեց, մոտեցավ Աշոտ դային և . . .

Ես հետևում էի այս ամենին և զգում, որ Աշոտ դային ինչ-որ կարևոր գործի վրա է . չի կարելի ասել, որ հեռավոր կերպով չէի գուշակում, թե ինչ է եփում . . . նա ինչ-որ բան ասաց Սիդորովին դեմքի լարված արտահայտությամբ, Սիդորովը

գլուխը շարժեց դրական մտքով և ինչ-որ հարցրեց, Աշոտ դային ժպտաց և պատասխանեց, հետո բարաքի աղմուկի միջից իմ ականջին հասան կարգադրիչի խոսքերը .

— Հիմա մենք կտեսնենք . . .

Նա մոտեցավ Աշոտ դայու հետ և դիմեց ինձ .

— Աղժեմյա՛ն, վաղը կգնա՞ս Առաջին՝ Բալաշովի հետ աշխատելու:

— Կգնամ, — պատասխանեցի ես:

— Լա՛վ, լա՛վ, — նա գրեց խավատախտակին երևի իմ անունը, — գրեցի՛նք, Բալաշո՛վ, — նա ցույց տվեց ինձ, — միասի՛ն կգնաք . . .

— Իսկ նա ի՞նչ պիտի անի, — հարցրեց Բալաշովն ակնհայտ դժգոհությամբ:

— Ճա՛նճ պիտի քշի, — բարկացավ Սիդորովը, — կգա որպես սևագործ:

Բալաշովն ուսերը թոթվեց և քրթմնջաց .

— Լսում եմ:

— Սաղ օլ, ուստա՛, — բացականչեց Մամոն, որը նույնպես հետևել էր դեպքերի ընթացքին, երբ Աշոտ դային բարձրացավ իր տեղը գոհունակ դեմքով: — Ո՛ղջ լինես, վարպե՛տ . . .

— Հայդո՛ւկ, — ասաց Աշոտ դային, — գործդ հաջողվեց, գնում ես:

Այնուհետև Աշոտ դային պատրաստեց իմ տոպրակը: Տոպրակում տեղավորեց երեք բաժին հաց, որից մեկն իմ օրաբաժինն էր, իսկ երկուսը՝ սանիտարից գնած օրաբաժինները՝ գերմանուհու համար: Աշոտ դային դրեց ինձ հետ նաև մի քանի կտոր շաքար, մի բուռ բրինձ և մի կտոր օճառ . Մամոյի աչքերը լցվեցին արցունքներով:

Յատուկ Պոէմ

— Ալլահը քեզ երկար արև տա, — մրմնջաց նա, — գյուղ քիմի աղամ սան, — վարդի պես մարդ ես . . .

— Դու մեզ մի՛ նայի, հայդո՛ւկ, մենք լոդրեր ենք, վեր կաց, քնիր, որ առավոտյան շուտ վեր կենաս:

Բարաքը չէր քնում, չնայած որ քնելու գոնգը վաղուց էր հնչել: Կալանավորներն զբաղված էին կարգի բերելով իրենց տնտեսությունը, կարելով, կարկատելով, նամակներ գրելով կամ վաղուց ստացված նամակները նորից և նոցից կարդալով: Ամեն անգամ, երբ կարդում են նրանք հին նամակները, նրանց թվում է, որ մի նոր բան են գտնում այդ նամակներում, մի նոր, կարևոր բան, որ առաջ չէին նկատել:

Ես պատրաստվում եմ հանձնվելու Մորփեոսին: Դուրս եմ գալիս բակը: Ճամբարը լռել է թրատող սառնամանիքից, կծկվել է խավարում և անհնարին է հավատալ, որ նրա գետնափորերում հազարավոր մարդիկ են ապրում: Ես իմ քայլերն ուղղում եմ դեպի այնտեղ, ուր թագավորներն անգամ գնում են ոտքով և գնում են մենակ . առանց թիկնապահների: Դեմից գալիս է մեկը: Երբ հավասարվում ենք, նա ինձ ճանաչում է:

— Քո Կառապետյանին այսօր էտապ տարան:

Էմանուել Ալտհաուզենի ձայնն է:

— Ի՞նչ ես ասում, իսկ ես . . . — տխրում եմ ես:

— Այնտեղ մի ուրիշ հայ էլ կա, — մխիթարում է ինձ իմ խոսակիցը, — բայց առանց «յանի», «ալո՛ւնց-խալո՛ւնց-մալո՛ւնց» կամ նման մի բան:

Ու մենք բաժանվում ենք՝ իրար բարի գիշեր մաղթելով:

Բարաքում Աշոտ դային նամակ է գրում Մամոյի կողմից: «Լյութմիլային»:

— Յա՛զ, ալլահ քյարիմ դըր . . . գրի՛ր, աստված ողորմած է, — թելադրում է Մամոն:

Յատուկ Պոէմ

— Կարապետյանին այսօր էտապ են տարել, — հաղորդում եմ ես Աշոտ դայուն,
— բայց իմ գնալը չի կորցնում իր իմաստը, — դատում եմ ես:

— Ոչ, չի կորցնում, — հաստատում է Աշոտ դային:

— Մանավանդ, որ այնտեղ մի ուրիշ հայ էլ կա . . .

— Դու գիշերային հավքերի՞ց առար այդ տեղեկությունները, — հարցնում է Աշոտ դային ծիծաղելով:

— Գիշերային հավքեր չեն մնացել, ցրտահարվել են, — ասում եմ ես ցրտից սրթսրթալով: Իսկ Աշոտ դային նամակը ծալում է շորի մի կտորով, խաչաձև կտրում . անհետացնում իմ ձմեռային գլխարկի պատռվածքներից մեկում և . . . և ես պատրաստ եմ մեծ ճանապարհորդության:

. . . Ճամփանե՛ր, ճամփանե՛ր, ես հիմա հիշում եմ ճանապարհներ, որոնք փակվեցին, և բացված նոր, հեռավոր ճանապարհներ: Ես հիմա հիշում եմ ազատության վերջին օրերը: Այդ ութ տարի առաջ էր: Ամառ էր, բառի իսկական իմաստով շոգ օգոստոս: Օ՛, այո, մենախցի երկաթե դուռը բացվեց իմ դեմ և փակվեց ինձ վրա օգոստոսի 10-ի լուսաբացին: Աշխարհը, Երևանը, փողոցը, որի վրա ես ապրում էի, տունը, հարազատներն ու ընկերները, «Կապույտ մզկիթն» էլ հետը՝ մնացին ասես յոթ սարից անդին, իսկ ինձ մնաց այն նեղ ու մութ խուցը, որի միակ բարձր, երկաթե ճաղերով ամրացված պատուհանից երևում էր դպրոցական քանոնի լայնությամբ ու երկարությամբ երկնքի մի շերտ, որը լինում էր կապույտ, ճերմակ, գորշ, նայած օրվան ու եղանակին:

Ես առանձնապես չազդվեցի, երբ գիշերվա 3-ին մի անծանոթ անձնավորություն ընկերական ուրախ սեղանից ինձ հանեց և ասաց, որ պետք է գնալ տուն: Ես առջևից, նա հետևից՝ մենք անցանք անմարդ, լուսնի լույսով ողողված փողոցներով և մոտեցանք մեր տանը: Մեծ տպավորություն չթողեց ինձ վրա և այն, որ մեր շենքի առաջ կանգնած էր մի փակ ավտո և մեզ երևի անհամբերությամբ սպասում էր մի երկրորդ անձնավորություն: Նրանցից մեկի հարցը՝ զենք ունե՞ք, ես համարեցի հիմարություն և ցույց տվի գրասեղանիս վրա մի բաժակում կողք-կողքի ցցված իմ զանազան գրիչներն ու մատիտները: —

Հարցը վերաբերում է ա՞յս գենքերին, — հարցրի ես: — Ես հարցնում եմ այսպի՛սի գենքի մասին, — ասաց նա և գրպանից հանելով՝ քթիս տակ թափ տվեց մի իսկական ատրճանակ: Սրա վրա ես պատասխանեցի, որ ես, որքան հիշում եմ, զինվորական չեմ եղել, դրա համար էլ ատրճանակ կրելու անհրաժեշտություն երբեք չեմ զգացել: — Լա՛վ ես երգում, — ասաց մյուսը, չնայած որ ես ոչ մի երգ չերգեցի և ընդհանրապես աչքի չեմ ընկել լավ ձայնով, թեև զուրկ չեմ եղել երաժշտական լսողությունից:

Ինձ վրա տպավորություն չթողեց նաև խուզարկությունը, որը տևեց մինչև լուսաբաց: Նրանք տակն ու վրա արին ամբողջ տունը, քրքրեցին իմ գզրոցները, առանձնացրին բազմաթիվ նամակներ, վերցրին1922 պահած իմ հուշատետրերը: Խուզարկության ընթացքում ես պառկեցի դիվանին, մի րոպե փակեցի աչքերս և ուզեցի պատկերացնել րոպեի լրջությունը: Հաջողության չհասա: Խուզարկությանը ներկա էր նաև դոմկոմը, այսինքն «տնային կոմիտեն» . նա ապրում էր մեր շենքում, աշխատում էր թատրոնում և մեծ հարգանքով ընդունում իմ բարևները: Հիմա նա կանգնած էր դռների մոտ պաշտոնական դիրքով և նայում էր ինձ սառը, անգամ թշնամական աչքերով:

Լուսաբաց էր, երբ վերջացավ խուզարկությունը: Նրանք հրամայեցին հետս վերցնել միայն սպիտակեղեն . — Ածելի՞: — Ոչ: Գրքե՞ր, թո՞ւղթ: — Ոչ, այնտեղ ամեն ինչ կա . . . Նրանք վերցրին մի մեծ թղթապանակ, ուր տեղավորեցին վերցրած կասկածելի (երևի) նյութերը: Դուռը փակեց «տնային կոմիտեն» և գրպանեց բանալին:

Ես գիտեի ուր են տանելու ինձ և ամենևին չզարմացա, երբ ավտոն կանգնեց և մենք դուրս եկանք խորհրդավոր շենքի բակը: Ոչ, այս ամենն ինձ վրա առանձին տպավորություն չթողեցին: Ես սթափվեցի միայն այն րոպեին, երբ ինձ հանձնեցին մի մարդու՝ ասելով .

— Վերցրու սրան, Ներսե՛ս . . .

Ներսեսը խոթեց ինձ մի քառակուսի սենյակ, կոպիտ կերպով արձակեց գոտիս, նետեց մի կողմ ու շուռ ու մուռ տալով խուզարկեց ինձ, ձեռքերն անքաղաքավարի կերպով խոթելով գրպաններս:

Յատուկ Դոէմ

Ես ցնցվեցի և առաջին անգամ զգացի, որ գործը լուրջ է և բանս՝ բուրդ:

Երկրորդ հարվածն իջավ իմ գլխին երրորդ օրը: Իմ մենախցի դուռը բացվում էր միայն առավոտյան և երեկոյան, երբ ինձ տանում էին փակ զուգարան: Մնացած գործերը կատարվում էին դռան վրա բացված մի քառակուսի անցքից: Այնտեղից ես ստանում էի բանտային օրաբաժին՝ 500 գրամ հաց, 25 գրամ շաքար, առավոտյան և երեկոյան մի-մի բաժակ թեյանման մի բան, իսկ կեսօրին՝ մի շերեփ վոհկ, որին այստեղ «սուպ» էին կոչում: Երրորդ օրը ճաշից հետո անակնկալ կերպով շխկշխկացին ծանր կողպեքներն, ու դուռը բացվեց:

— Ոտքի՛, — հրամայեց ներս մտնողը, — երբ բանտապետը ներս է մտնում՝ ոտքի՛:

Ես կանգնեցի:

Նա նայեց շուրջը և հարցրեց .

— Ասելու բան ունե՞ս . . .

— Ինձ հայտնի չէ, թե ինչու ինձ . . . — սկսեցի ես:

— Կգա ժամանակը և կիմանաս, — կտրեց նա:

— Արդեն երեք օր է, ինչ այստեղ եմ . . . ես գործեր ունեմ . . .

Չլսելու տվեց:

— Արև, արևի լույս չեմ տեսնում . . .

Այստեղ էր, որ նա իջեցրեց կացինը .

— Սովետական արևը հակահեղափոխական սրիկաների համար չէ՛ . . .

Ու նայեց աչքերիս:

Կարճահասակ էր նա, ամառային համազգեստով, շեկ, կարճ, մեջտեղը ճեղքված եռանկյունի բեղերով, բաց լեղակագույն աչքերով, ըստ ամենայնի լպստած մի դեմք . ես ուզեցի գոռալ, օգնություն կանչել, պատիվ պահանջել, բայց այդ րոպեին նա դառնում է դռների մեջ կանգնած պահակին և հարցնում .

— Ո՞նց է պահում իրեն . . .

Պահակը տեղը քայլ կատարեց .

— Չի՞ կծում . . .

Պահակը նայեց գիշեր-ցերեկ վառվող՝ առաստաղից կպած աղոտ լույսին: Բանտապետը դուրս քաշեց գրպանից գորշագույն թաշկինակը, աղմուկով խնչեց ու դուրս եկավ:

Ահա թե երբ, ավելի շուտ՝ նաև ե՞րբ ես զգացի, որ ինձ հետ կատակ չեն անում, և իմ բանը բուրդ է, ի՛նչ բուրդ, բամբակի տակա՛նք ասա . . .

Անցնում են ժամերն առանց ժամացույցի և օրերն առանց օրացույցի: Յոթանասունհինգ օր հաշվեցի ես այդ մենախցում: Այս ժամանակահատվածում ես ածել եմ, ես հիմա շատ բան գիտեմ, որ առաջ չգիտեի: Այո, լայնացել ու հարստացել է իմ հորիզոնը: Ես հիմա գիտեմ, որ ես անդամ եմ «ընդհատակյա-ազգայնական-տրոցկիստական-տեռորիստական կազմակերպության»: Այո՛: Կարգին մարդ եմ եղել ես և ինքս տեղեկություն չեմ ունեցել: Ես հիմա գիտեմ, որ մենք՝ մի քանի գրողներ գաղտնի ժողովներ ենք գումարել և գիշեր-ցերեկ մտածել ենք մի կերպ Հայաստանն անջատել Ռուսաստանից: Էլի շատ բաներ գիտեմ ես, որոնց մասին պատմելը երկար կլիներ, կասեմ միայն, որ եթե հիմա իմ խեղճ, որբացած մայրիկը կարողանա ինձ տեսնել և մի ժամ խոսել ինձ հետ, պիտի մտածի, որ ես կամ խախտվել եմ, կամ ես՝ ես չեմ, կամ մինչև հիմա նա չի իմացել, թե իր հարազատ որդին ինչ ահավոր գազան է եղել:

Նոյեմբերյան մի տխրամած առավոտ, երբ բարձր պատուհանից երևացող քանոնաձև երկինքը կապարի գույն ուներ և լսվում էր բակում հոսող անձրևաջրի

խուլ խշշոցը, դուռն աղմուկով բացվեց, և ներս մտավ պահակը .

— Ունեցածդ հավաքի՛ր . . .

— Ուր . .

— Ունեցածդ հավաքի՛ր, — կրկնեց նա:

— Ես պատրաստ եմ:

— Առաջ ընկիր:

Առաջ ընկա:

— Դեպի աջ:

Ես գնում եմ դեպի աջ: Այս աջ թեքումն իմ սիրտը լցնում է անձկությամբ: Ցամաք նետված մահամերձ ձկան նման հույսն իմ մեջ բերանը բացուխուփ է անում: Մի՞թե . . . մի՞թե ազատություն:

— Սանդուղքներով վե՛ր:

Ես բարձրանում եմ տասնյակի մոտ սանդուղքներով: Հիմա ես գտնվում եմ ներքնահարկի վրա ամուր նստած բանտի երկրորդ հարկում՝ աջ ու ձախ ձգվող երկար, կիսամութ միջանցքներով և կամերաների, այսինքն բանտային խցերի համարակալված դռներով:

— Ձա՛խ, — լսում եմ հրահանգը և թեքվում այս անգամ ձախ:

— Կանգնի՛ր:

Ես կանգնում եմ մի փակ դռան առաջ: Նայում եմ համարը՝ 12: Պահակը գործի է դնում մի քանի բանալի, բացում արտաքին, ապա ներքին շարժական և անշարժ կողպեքները, շրխկացնում ինչ-որ նիգեր, և ես ներս եմ մտնում:

Յատուկ Պոէմ

Մի րոպե, և ես ինձ զգում եմ այնպես, ինչպես բեմ մտած մարդը: Ծխախոտի ծխի միջից դեպի ինձ են հառել իրենց նայվածքները ինձ նման մազակալած մարդիկ՝ նստած ոմանք սակավաթիվ մահճակալներին, ոմանք հատակին փռված անկողիններին: Ես լսում եմ իմ անունը ոչ այն շեշտով, ինչպես ծանոթը տեսնում է իր ծանոթին և տալիս նրա անունը, ոչ, այլ տարակուսանքով, երկմտելով . նա՞ է, թե՞ նա չէ . . . Այո, կային ծանոթներ: Նրանցից մեկը հատկապես ինձ զարմացրեց իր ներկայությամբ . ով՝ ով, համենայն դեպս, նա դրսում պիտի լիներ և ոչ ներսում: Դա մի փիլփսոփա էր, որը մի քանի անգամ երևաց գրողների տան բեմում և ուղղափառ ճառեր ճամարտակեց մեր դեմ, հանդիսանալով մեր թունավոր հակառակորդներից ձայնափողը:

— Ե՛կ, ե՛կ նստիր . . . ոչինչ մի հարցնի, իմ ընկերներն ինձ դավաճանեցին, — ասաց նա ինձ:

Ու ես նստեցի ու ոչինչ չհարցրի: Ես ոչինչ չհարցրի, որովհետև քաջ գիտեի նրա ընկերներին, նրանք գիտեին և՛ դավել, և՛ դավաճանել: Ես նստեցի, իսկ նա շարունակեց կիսատ թողած շախմատը: Նա լուռ էր, երբ հակառակորդն էր քայլ կատարում, հետո նա երգում էր .

Партизанские отряды
Занимали города...

Անում էր իր քայլը, լռում և նորից երգում նույն երկու տողը՝ ջղեր սղոցելու չափ միօրինակ ու ձանձրալի, ձանձրալի ու միօրինակ բանտարկյալի օրերի նման . . .

Բանտարկյալի օրե՛ր, բանտարկյալի օրե՛ր: Երկու տարի ես ապրեցի №12 ընդհանուր բանտասենյակում, որին մենք Դյուժինգրադ անունով կոչեցինք: Երկու տարվա ընթացքում Սայաթ-Նովի քյամանչի նման՝ շատ բան տեսավ Դյուժինգրադը:

Կամաց-կամաց ուժեղացավ «մարդամթերման» թափը, իսկ 1937 թվականին հասավ իր գենիթին: Դուրս նետեցին ժանգոտ մահճակալները, և Դյուժինգրադի բնակիչների թիվը ութսունի հասավ: Գալիս էին ամեն օր նոր ու նոր հոսանքով

նոր կալանավորներ և բերում ահավոր լուրեր: Շոգ օր, բայց նոր ժամանող կալանավորները հավատացնում էին, որ քաղաքի շենքերի ծխնելույզներից ծուխ է բարձրանում: Ի՞նչ զարմանալի բան, ինչո՞ւ են վառվում վառարանները, պարզվում է, որ գրքեր են այրում, այրում, այրում են նրանց գրքերը, որոնք նետված են բանտերը: Խարո՛ւյկ: Խարո՛ւյկ: Խարույկ: Փակեցե՛ք ձեր աչքերն ու ականջները, մարդիկ, միջնադարը վերադարձել է . . . Հնձված էր և շարունակում էին հնձել կուսակցական և կառավարական կարևոր ղեկավարներին, բոլոր հիմնարկների պետերին ու պատասխանատուներին, հանրապետական գլխավոր դատախազին ու դատախազներին, Կենտկոմի նոր քարտուղարին ու նրա աշխատակիցներին, շրջկոմ ու գործկոմ, համալսարանի դասախոս ու վանեցի, ուսուցիչներ, գյուղացիներ, ուսանողներ, բարձր դասարանցի աշակերտներ: Դյուժինգրադում բնակություն հաստատեցին երեք ժողովրդական կոմիսար, մեկ բժիշկ, երկու շրջկոմի քարտուղարներ, երեք դասախոս, ինքը՝ քաղխորհրդի նախագահը, կենտրոնական թերթի նախկին և ներկա պատասխանատու խմբագիրները, երկու գնդապետ, մի փոխգնդապետ . . . Մի օր էլ . . .

Դուռն աղմուկով բացվեց և ամառային համազգեստով ներս մտավ բանտապետն այս անգամ առանց պահակի ուղեկցության: Մի քանիսը ոտքի կանգնեցին, իսկ մեծ մասը միայն անհանգստացավ: Ավելի մոտիկ նստածները ոտքի թռան, բայց ոչ ըստ բանտային ներքին կանոնադրության: Առաջին բանը, որ նկատեցին նրանք, այն էր, որ բանտապետը գոտի չուներ և չուներ բանտապետի իր խրոխտ արտահայտությունը: Նա անվճռական մի քայլ կատարեց դեպի առաջ, բայց քայլելու տեղ չգտնելով, կանգուն մնաց՝ դռնից մի քիչ հեռու դրված թիթեղե այն մեծ ամանի մոտ, ուր կալանավորներն իրենց փոքր կարիքն էին հոգում: Առաջինն ուշքի եկավ լենինականցի նշանավոր իրավաբանը: Նա իր խռպոտ բասով հարցրեց .

— Հերթը քե՞զ հասավ:

— Այո՛, — պատասխանեց նախկին բանտապետը, — Գեպեուն ամբողջ կազմով նստեց, ավագ քննիչն ինքնասպանություն գործեց:

Գեպեուն պետական անվտանգության վարչությունն էր:

Յատուկ Պոէմ

Նույն իրավաբանը, որը կամերկոմն էր, այսինքն բանտախցի ավազը, 81-երորդին տեղ տվեց հիշյալ թիթեղե ամանի մոտ: Այդպես էր օրենքը, նորերն անցնում էին այդ քավարանը ու երբ հներին տանում էին այս կամ այն ուղղությամբ, նրանք աստիճանաբար բարձրանում էին, իրենց տեղը զիջելով նորեկներին:

— Մեռնեմ օրենքին, — հպատակվեց նախկինը:

Նրանից մենք շատ բան իմացանք: Նորեկ կալանավորներից մենք լսել էինք, որ նախկին լուսժողկոմը և նրա խմբակի անդամները ոչնչացված են առանց դատի ու դատաստանի, նրանց հետ նաև «խեղճ նայիրցին»: Նախկինը հաստատեց այս իրողությունը: Նա մասնակցել էր այդ ապերացիային, ինչպես ինքն էր ասում, այսինքն՝ գործողությանը: Պատմեց նաև, որ գնդակահարվելուց առաջ նախկին լուսժողկոմն ամբողջ կոկորդով գոռացել է .

— Մենք դեռ կգա՛նք . . . Կեցցե Լենինի կուսակցությունը:

Երբ նախկինը հարմար կերպով տեղավորվեց իրեն հատկացված ամհարմար կենսական նեղ տարածության վրա, բացվեց մի հարցազրույց: Հարցեր տալիս էին գրեթե բոլորը և նա պատասխանում էր բոլոր հարցերին՝ գրեթե: Մի երկու հարցի կողքով անցավ, մի հարցի պատասխանը եղավ՝

— Չգիտեմ, ինչ-որ չգիտեմ, չգիտեմ . . .

Նրա ասելով՝ Թիֆլիսից տրված է «Մարդամթերման կայուն պլան», պետք է «նստեցնել» մոտ 40. 000 մարդ: Դրանցից մի մասը կմահանա, մի մասը կգնդակահարվի, իսկ մեծ մասին կքշեն հյուսիս, համակենտրոնացման ճամբարները՝ ծանր աշխատանքի: Մի շրջկոմի քարտուղար մինչև ականջները վրդովված ասաց, որ դա պրովոկացիա է, որ նման հակամարդկային լագերներ գտնվում են հիտլերական Գերմանիայում, որ սոցիալիզմի երկրում . . .

Բանտապետը փափուկ կերպով կտրեց շրջկոմի քարտուղարի ուղղափառ ճառը:

— Դե՛, հիմա ժամից ե՛ս եմ գալիս, «տեր ողորմյա» դո՞ւ ես ասում . . .

Յատուկ Պոէմ

Խնդիրն սպառված է:

Օրերի ընթացքում նա ավելի ու ավելի բացվեց: Նա ասաց, որ ինքը ոչ մի բանից չի վախենում և գիտե, որ իրեն նման մարդկանց չեն բռնում առհասարակ, իսկ եթե բռնում են, վերջը գնդակահարությունն է:

Գեպեուի ամբողջ կազմը վերին Երուսաղեմ կուղարկեն, եղած գործերն էլ իզ ու թոզով սրբելու համար: Էն սրբողներին էլ կսրբեն: Հովաննես Թումանյանը մի խոսք ունի .

Միշտ ուժեղից ուժեղը կա,
Իսկ ամենից ուժեղը մահ . . .

Հիմա մերն է .

Միշտ բռնողին բռնողը կա,
Իսկ բոլորին բռնողը նա . . .

— Բա՞ս, — վերջացրեց նա:

Վճռապես կարելի է պնդել, որ այս բանտապետը սեփական մտքեր ունի, և դա ինձ դուր է գալիս . . . Իսկ բոլորին բռնողը՝ նա . վատ չի ասված: Ունկնդիրները կարծես խոսքները մեկ՝ չլսելու տվին այս «նա»-ն: Ո՛վ իմանա, գուցե դիտմա՞մբ են նստեցրել այս բանտապետին կամ ինքը դիտմա՞մբ է նստել և հիմա խո՞սք է քաշում, թե ով ի՞նչ է մտածում նրա մասին: Նման դեպքերում չպետք է լռել, որովհետև երբ դու հակապետական մի բան ես լսում և լռում ես, այդ նշանակում է, որ դու համաձայն ես: Այսպես թե այնպես, պետք է հակահարված տալ:

Հակահարվածը չուշացավ, և նույն շրջկոմի քարտուղարը ցուցաբերեց մեծ ու նախանձելի զգոնություն:

— Դու, ի՞նչ է, ուզում ես ասել, որ նա տեղյա՞կ է այս բոլոր խայտառակություններին, — հարցրեց նա և շարունակեց, — մենք այդ կարծիքին

Յատուկ Պոէմ

չենք: Մի օր կիմանա նա, թե ինչ է կատարվում տեղերում, և այն ժամանակ ցույց կտա, ո՞վ է ժողովրդի թշնամին՝ մե՞նք, թե նրանք, որոնք մեր գլխին խաղացին այս խաղը: Դու ասում ես, որ Գեպեուի կազմը բռնվա՞ծ է . . . ուրիշ կերպ չէր կարող լինել, ուրեմն մեզ բաց կթողնեն . . .

— Լա՛վ, լա՛վ, — ասաց նախկին բանտապետը, — դու կաց այդ խելքին:

Նա գլուխը հենեց պատին և փակեց աչքերը:

Ծեծի մասին նախ սկսեցին խոսել շշուկով: Համալսարանի դասախոսներից մեկը կեսգիշերին վերադառնալով քննությունից՝ իր հարևանի ականջին փսփսաց, որ քննիչի մոտ եղած ժամանակ կողքի սենյակից իր ականջին հասել են հայհոյանք, գոռգոռոց և օգնություն խնդրող կանչեր: Մի օր էլ քաղխորհդի նախագահը քննությունից վերադարձավ թաշկինակով բերանը բռնած: Նա բացատրեց, որ ատամնացավը հանկարծ բռնեց: Զարմանալին այն էր, որ սպիտակ թաշկինակի վրա երևում էին արյան բծեր: Երկու օրից հետո նույն ատամնացավով տառապողին քննիչի մոտ տարան, և նա վերադարձավ քսանչորս ժամ հետո միայն: Մենք ասինք վերադարձավ, բայց դա չափազանցություն է, ճիշտ կլիներ, եթե ասեինք՝ բերին: Դուռը բացվեց սովորական աղմուկով, երկու պահակ նրան ներս բերին երկու թևերից բռնած, դուռը փակեցին, իսկ նա ընկավ դռան տակ ծանր պարկի նման:

Կալանավորները միջահասակ և հաղթանդամ քաղխորհրդի նախագահին միացյալ ուժերով իր տեղը քաշեցին և պառկեցրին: Ալեխառն մազերով՝ քաղաքի հայտնի բժիշկն արձակեց աղետյալի կոճակները և շորերը հանել տվեց: Նա ծանր տնքոցով ընկավ փորին: Բժիշկը բարձրացրեց բծավոր շապիկը: Նրա հարթ, ողորկ կռնակը կապտած էր, տեղ-տեղ սևացած, տեղ-տեղ արնկթած:

— Այս ինչո՞վ են ծեծել, — զարմացավ բժիշկը:

— Շոմպոլներով, — շշնջաց աղետյալը:

Հետագայում պարզվեց, որ այդ «շոմպոլ» կոչվածը ծանր, ճկուն, մտրակի նման մի բան է, որը հյուսված է երկաթալարից և ռետինից:

Յատուկ Պոէմ

— Ի՞նչ են ուզում քեզնից, — հարցրեց բժիշկը՝ դիմելով նրան անուն-հայրանունով:

— Ստորագրել:

— Որ ի՞նչ . . .

— Որ հակահեղափոխական եմ, վնասարար . . . ճապոնական ագենտ, — պատասխանեց դժվարությամբ հեղափոխական անցյալով հարուստ կոմունիստը:

Բժիշկը ժպտաց:

— Ինչո՞ւ անպայման ճապոնական . . . որովհետև ձեր դիմագծերում ինչ-որ ճապոնական բա՞ն կա երևի . . .

Իսկապես, քաղխորհդի նախագահը շատ նման էր ճապոնացու: Նա անձայն ծիծաղեց:

Բոլոր կալանավորներն իրենց հոգու խորքում փայփայում էին այն հույսը, որ «ճապոնացու» գործը բացառիկ գործ է, որ նման դեպքեր այլևս չեն կրկնվի, որ սա՝ մի երկու քննիչի կամայականության արդյունք է և ուրիշ ոչինչ . . . Բայց երբ հաջորդ օրերի և շաբաթների ընթացքում ծեծված ու խոշտանգված վերադարձան կենտրոնական թերթի նախկին խմբագիրը, կըրխ-դահիրմանցի, շեկ մազ-միրուքով, ազնիվ, կապույտ կրակով վառվող աչքերով մի գյուղացի, գինվորականները, ժողովրդական կոմիսարներից, այսինքն մինիստրներից երկուսը, նույն ինքը՝ հավատավոր շրջկոմի քարտուղարը, և երբ Դյուժինգրադը վերածվեց հիվանդանոցային պալատի, բոլորի համար պարզ դարձավ, որ կիրառվում են զանգվածային դաժան ծեծ ու բռնություն: Նույն վիճակին արժանացավ բոլորին խնամող և սրտապնդող բժիշկը: Նա ներս մտավ տանջահար ու գունատ, թրջեց երկու թաշկինակ և սկսեց հերթով հովացնել այրող խարանները՝ ինքն իրեն մրմնջալով:

— Բժի՛շկ, բժշկեա՛ զանձն քո . . .

Յատուկ Պոէմ

Ներքին բանտը տնքում էր:

. . . . . .

Ճամփանե՛ր, ճամփանե՛ր: Վաղը դու գնում ես Առաջին, և մի՞թե սա համեմատական կամ հարաբերական երջանկություն չէ: Այդ յոթ տարվա ընթացքում յոթից ավելի անգամ դու տեսար և զգացիր համեմատական երջանկության համն ու հոտը: Ի՞նչ է համեմատական երջանկությունը . այդ մասին մի օր պատմեց նույն կըրխ-դահիրմացին, մի ծխախոտ փաթաթելով: Խոսակցությունն սկսվեց այն բանից, երբ ես ասացի, որ ձեր գյուղի անունը՝ Կըրխ-դահիրման, բանի նման չէ, ինչո՞ւ չեք փոխել: Նա չհամաձայնվեց: Կըրխ-դահիրման, — ասաց, — նշանակում է քառասուն ջրաղաց: Մի՞թե սիրուն անուն չէ: Հին-հնուց մեր շենն ունեցել է քառասուն ջրաղաց, հետո պզտկցեր է, էնքան է պզտկցեր, որ ոչ մի ջրաղաց չի պահել, գյուղացիներն իրենց աղունը տանում էին հարևան գյուղի ջրաղացը: Մի երկու տարի առաջ մի ջրաղաց սկսեց բանել, տեսնե՛ր, ի՛նչ քեֆ եղավ, ի՛նչ քեֆյաթ . . .

— Դրա ավելի լավ պատմությունը կա, — շարունակեց նա, — ասեմ, լսիր: Խեղճ Ահմեդն իր կնկա հետ կապրի մի պստիկ տան մեջ: Երկու էծ ունի, մի կով, հավ, ճիվ . . . քանի երկու հոգով էին, ալլահից գանգատ չուներ, բայց որ դարձավ հինգ երեխի հեր, օթախը պստիկ եկավ Ահմեդին: Կնիկն էլ ամեն օր տզզաց, տզտզաց, թե՝ էս ինչ կյանք է, օթախի մեջ շուռ գալ չի լինի, իրար վրա թափված, գիշեր ոչ քուն կա, ոչ հանգիստ: Ճարը գցին մոլլին: Մոլլան լսեց Ահմեդի գանգատ, մուրուս սղալեց ու հարցրեց .

— Հավ-ճիվ ունե՞ս: — Ունեմ, ինչի՞ չունեմ, — ուրախացավ Ահմեդ, մտածելով, որ մոլլան գործը հաջողեցնելու համար կաշառք կուզե . — Էսօրվանից հավերը քշի օթախդ, միասին քնեք, միասին զարթնեք, — հրամայեց մոլլան: Հրամանը հրաման էր: Եկավ Ահմեդ, կնկան պատմեց, էսպես-էսպես: Ճարն ի՞նչ: Հավերուն ներս արին ու քնան: Առտուն վեր կացան, չորս կողմ՝ փետուր, կեղտոտություն: Կինն էլի տզաց:

— Գնա՛, ասա՛, էսպես ապրել չի լինի, թող հրաման տա, գոնյա հավերուն դուրս թալենք: — Գնաց, թե՝ մոլլա, էսպես-էսպես: Մոլլան մորուս սղալեց, հարցուց:

— Էծ-մեծ ունե՞ս:

— Ունեմ, — խեղճացավ Ահմեդը, — երկու էծ ունեմ: — Էծերին էլ օթախդ առ, միասին քնեք, միասին զարթնեք, — հրամայեց մոլլան: Եկավ Ահմեդ, կնկան պատմեց, էսպես-էսպես: Հրաման հրաման էր, էծերուն ներս արին ու քնան: Ի՛նչ քնել: Առտուն քնահարամ վեր կացան, ամեն կողմ պտըտուր, անտանելի ֆոտ: Կինը ծնկներ ծեծեց:

— Ալլահի սիրուն, գնա՝ մի ճար արա, էսպես ապրել՝ ապրել չի: — Գնաց Ահմեդ, գտավ մոլլին: — Էսպես ապրել՝ ապրել չի, մոլլա, մի ճար արա: — Մոլլան մտածեց, մտածեց, ծանր ու թեթև արավ, հարցուց: — Կով ունե՞ս:

— Ունեմ, — գույն տվեց, գույն առավ Ահմեդը, — մի ֆորթ էլ հետը:

— Կովն ու ֆորթը ներս առ, միասին քնեք, միասին զարթնեք: — Էկավ Ահմեդ, կնկան ասաց: — Կնիկ, մեր տուն ավիրվավ, էսպես-էսպես:

Կովն ու ֆորթը ներս առան, գիշեր չքնան: Կնիկ չուր ի լուս լաց ու արցունք թափեց: Առտուն վեր կացան, անասուններ դուրս քշին, մարդ ու կնիկ չոքան, օթախի կեղտոտություն մաքրին, դուրս թափին: Կնիկ չարշափ թալեց գլխին, գնաց չոքավ մոլլի առաջ, խնդիր, պաղատանք արավ, թե ալլահի սիրուն մի ճար արա: Մոլլան մորուս սղալեց, ծանր ու թեթև արավ, հարցրեց:

■ ■■■■, ■■■ ■■■■■■■ ■■■■ ■■■■■■ ■■ ■■■■■■

— Էստեղ կնկա ուշք գնաց: Էլի՛, էլի վեր, գնա՛ տուն, — ասաց մոլլան, — գնա՛ հանգիստ ապրի: Ահմեդի կին ուրախացավ, աշխարհով մեկ եղավ, եկավ, ասաց: Մա՛րդ, ապա չե՞ս ասե, մոլլան կուզեր Ալու էշերն էլ մեր օթախ քշել, իմ ուշք գնաց վախից, նա էլ խղճաց մեզի, բաշխեց, ազատեց էդ փորձանքից: Իրիկուն, մարդ ու կին անասուններ ներս առին, պառկան, քնին: Անցավ ժուկ ու ժամանակ, մեկ օր մոլլան կանչեց Ահմեդին: Ահմեդ, — ասաց, գնա՛, հավերին քշի հավանոց:

— Ահմեդ խնդումերես տուն եկավ, հավեր դուրս քշին, մի քիչ թեթևցան: Երկու օրից մոլլան կանչեց Ահմեդին:

— Ահմեդ, ասաց, էծերդ դո՛ւրս արա: — Ալլահի շնորհք քեզ վրա թափվի, այ մոլլա, ուրախացավ Ահմեդը, տուն վազեց, էծերը գոմ քշին, պառկան ու անուշ քնով քնան: Անցավ մի շաբաթ . մոլլան կանչեց Ահմեդին, ասաց:

— Կովն ու ֆորթն ախոռ քշեք, հանգիստ, բախտավոր ապրեք . . . Տուն եկավ Ահմեդ՝ ալլահին փառք ու մոլլին օրհնանք տալով: Մարդ ու կին լեն ու բոլ յաթաղներ փռին, ուրախությունից չուր կես գիշեր արթուն մնացին, երեխաներին գրկան, քնան: Ու կապրեն չուր ի էսօր էդպես բախտավոր, իրենց հին օթախում:

Այս է ահա Ահմեդի ու ահմեդների բախտը և այս է իրենց սփոփում . . . Այս է, ինչ կոչվում է համեմատական երջանկություն:

Ու մի՞թե համեմատական երջանկություն չէր, երբ մեկուկես տարի ներքին բանտում ամենայն բարեխճությամբ չմեռնելուց հետո քեզ հանեցին Դյուժինգրադից և ապրանքատար մեքենայում քեզ նման ապրանքների հետ բարձեցին ու քշեցին քաղաքային բանտ: Ապրանքատարը սլացավ Նալբանդյանով ու մտավ Մարքսի փողոց: Ապրանքատարի երկու կողմով հոսեցին ծանոթ տներ, մարդիկ, հիմնարկներ: Երկիրը պատրաստվում էր, ըստ երևույթին, ինչ-որ տոնի: Կենտկոմի, պետական բանկի և քաղխորհրդի շենքերի ճակատներով մեկ, կողք-կողքի շարված էին երկրի ղեկավարների մեծադիր նկարները, իսկ ամենամեծը՝ ամենամեծ ղեկավարի նկարն էր, որն անտեղյակ էր, թե ինչ է անցնում ու չի դառնում Երևանում: Մեքենայի աղմուկի միջից իմ ականջին հասավ բարձրախոսի

Я другой такой страны не знаю,
Где так вольно дышит человек...

երգը: Քաղխորհրդի հրապարակում ես կարողացա ճանաչել կենտրոնական թերթի գլխավոր հաշվապահին, նիհար, բարձրահասակ, ինչպես միշտ թթված դեմքով՝ նա կտրում էր հրապարակը: Մարքսի փողոցից ապրանքատարը թեքվեց պետական կրկեսի փողոցը, ևս մի պտույտ, և ահա մեր չորս ապրանքատարները՝ բեռնավորված այն ժամանակ ամենաթանկագին կապիտալով — նախկին մարդկանցով, մտան քաղաքային բանտի

դարպասներից ներս:

Հիմա մենք գտնվում ենք համեմատական երջանկության ընդարձակ բակում: Երկաթաճաղ բազմաթիվ բաց պատուհաններից դուրս է հորդում խժալուր աղմուկ: Այստեղ մինչև անգամ երգում են: Բանտապետը մեկ-մեկ կարդում է մեր ազգանունները, մենք պարտավոր ենք լրացնել՝ բարձրաձայն արտասանելով մեր անուններն ու հայրանունները: Այսպիսով, բանտապետն ապրանք է ընդունում: Հետո մեզ բաժանում են կամերաների վրա: Ես մի խմբի հետ ընկնում եմ 5-րդ կամերան, այսինքն Դյուժինգրադից ընկնում եմ Հնդկաստան: Այստեղ էլ ծանոթներ կան, մոտ, սրտառուչ մարդիկ: Մենք քաշվում ենք մի անկյուն և փորձում բացատրել, թե ինչ պատահեց մեզ հետ, և գուշակել, թե ինչ կարող է պատահել . . .

Ու չենք հասնում ոչ մի արդյունքի:

Եվ մի՞թե այս չէ համեմատական ահմեդյան երջանկությունը . շաբաթվա ընթացքում մենք մեր հարազատներից սպիտակեղեն ենք ստանում, տնային ուտելիք, ծխախոտ: Մենք ամենօրյա, տասը րոպեի տևողությամբ զբոսանք ունենք, շրջում ենք ընդարձակ շրջանաձև բակում, և նայում աջ ու ձախ, վեր, վար, որտեղ ուզենք: Կամերայի պատուհանից մենք կարող ենք տեսնել կրկեսի շենքը, տրամվայների հեռավոր երթևեկությունը, բանտի դռան մոտ խռնված՝ ծանրոցներ հանձնող հարազատների ահագին բազմությունների հերթը: Կամերայի անձնակազմը բազմազան է, բազմազգ, գյուղացիներ և քաղաքացիներ: Նրանք շատ են, կամերաների տարողությունից մի քանի անգամ շատ: Քնում ենք ոտք-գլուխ, կամերկոմը լուցկու տուփով չափում է ամեն մեկին հասնող կենսական տարածությունը: Ցերեկները ոչինչ, մարդիկ նստում են կողք-կողքի, իրար սեղմված: Գիշերը ծանր է, մի կողքից մյուս կողքին շրջվելը կապված է տիեզերական դժվարությունների հետ:

Չնայծ դրան, մարդը քարից ամուր է . կամերան ունի իր իսկական կամերային երգիչը, հեքիաթասացը, խեղկատակը: Կամերան զվարճանում է, դոմինո, նարդի, շախմատ է սարքում, խաղում է, բանաստեղծները լուցկու այրված քթով ծխախոտի թղթերի վրա բանաստեղծություններ են գրում: Ներս են մտնում հանկարծ ինչ-որ կանաչ գլխարկավորներ, ինչ-որ ցուցակներով: Կարդում են

կալանավորների անուններն ու մեկ-մեկ դուրս հանում կամերայից: Հիմա մենք գիտենք, թե ուր են տանում նրանց, առաջ անփորձ էինք, չգիտեինք: Մեզ լուսավորեցին բանտարկված քննիչներն ու բանտապետը: Երբ կարդում էին միայն կալանավորի անունն, ազգանունն ու հայրանունը, նշանակում է, «էտապի են հանում», այսինքն տանում են Սիբիր, իսկ երբ կարդում են անունը, ազգանունն ու հայրանունը, ապա ստուգում ծննդյան թվականն ու ծննդավայրը, ապա նշանակում է տանում են . . . տանում են այնտեղ, ուր մի օր տարան իմ «խեղճ նայիրցուն»:

Խե՛ղճ նայիրցիներ, խե՛ղճ նայիրցիներ:

Նրանց չեն դատում, այսինքն դատում են՝ բացակայությամբ: Դրա համար գոյություն ունի տրոյկա, այսինքն՝ եռյակ: Նստում են երեքով, վերցնում հսկայական ցուցակներ, աշխատում սև ու կարմիր մատիտներով: Այստեղ էլ երջանկությունը համեմատական է: Սև խաչավոր անուն-ազգանուն կրողներն ավելի բախտավոր են, քան կարմիր խաչավորները: Ամեն դեպքում խաչը մնում է խաչ:

Երբ կամերայից դուրս է գալիս ցուցակով կանչված վերջին մարդը ու նրա ետևից կանաչ գլխարկավորները, ու երբ փակվում են ծանր դռները, մի րոպե տիրում է ծանր, ծանրությունից էլ ծանր լռություն, որից հետո կյանքը կարծես մտնում է նոր մի հուն: Նորից կամերան սկսում է բզզալ անհանգիստ բզզոցով . և մնացորդներին տիրում է համեմատական երջանկության զգացմունքը, մի գիշեր նրանք մի քիչ կպարզեն ոտները, իսկ վաղը . . . վաղը նրանց սպասում են նոր անակնկալներ . — կբերեն նոր, թարմ մարդկանց և նրանք կպատմեն, թե ինչ է անցնում, դառնում դրսի աշխարհում:

Մեղադրել, որ նրանք եռյակների և զանազան արտակարգ հանձնաժողովների միջոցով արագ և առանց օրինական քաշքշուկի վճռում են մարդկանց ճակատագիրը գունավոր մատիտների օգնությամբ, անարդարացի կլիներ: Որովհետև եթե այդ ահագին կալանավորական բանակներն օրինական կարգով և արարողություններով դատեին և դատապարտեին, ապա գլուխ բերելու համար այդ գործը հարկավոր կլիներ տասնամյակներ: Իսկ մեկ տասնամյակն արդեն ինքնըստինքյան պատմություն է: Իսկ այն ժամանակ պատմություն

ստեղծողները պատմության հետ գլուխ դնելու նախասիրություն չունեին: Երբ «Կապիտալի» առաջին թարգմանչին, ազնիվ սովետական դասախոսին քննիչները ծեծի են քաշել, դասախոսը փորձել է ուշքի բերել իր նախկին ուսանողներին, դիմելով նրանց զգաստացնող խոսքերով: — Ի՞նչ եք անում, տղաներ, ինչո՞ւ հեռու չեք նայում, ախր, պատմություն կա, պատասխանատվություն կա . . . Քննիչներից մեկը ծխախոտը հանգցրել է՝ սեղմելով իր պրոֆեսորի ճակատին և ասել: — Քանի մենք կանք, պատմություն չի լինի, իսկ երբ պատմություն լինի, մենք չենք լինի: — Ճի՛շտ գուշակություն: Հիմա, երբ այդ օրերը պատմություն են դարձել, երբ տիրում է երկրում լենինյան կարգ ու կանոն, նրանցից ոչ մեկը չկա . . .

Համեմատական երջանկությունը չի գալիս այն հետևողական կարգով, ինչպես եղավ Ահմեդի կյանքում: Այս տեսակետից քո կյանքն ավելի բարդ եղավ: Եղավ այնպես, որ համեմատական երջանկությանը հաջորդեցին անհամեմատ ձախորդությունն ու դժբախտությունը: Անցավ աշունը, եկավ ձմեռը, ձմեռն էլ անցավ, եկավ գարուն, հալավ բարձրիկ սարերու ձյուն . . . Բայց ոչ մի ճամփա չբացվեց կալանավորներուն: Այս ամբողջ ժամանակվա ընթացքում բաց էր միայն մի ճանապարհ, էտապների ճանապարհը:

Այս պայմաններում սիրտ կա դեռ կատակելու: Մեզ հայտնի է, որ մեր դիմացի կամերայում նստած է պետհրատի հաղթանդամ դիրեկտորը: Մի անգամ զուգարանի պատին մատիտով ես գրեցի . «Պետհրատի դիրեկտորին . ի հաշիվ հոնորարի խնդրում եմ ամառանոց մեկնելու կապակցությամբ բաց թողնել 350 ռ . կանխավճար»: Եվ ստորագրեցի: Երկրորդ օրը իմ գրության տակ շեղակի մակագրել էր . «Հաշվապահությանը, — բաց թողնել 300 ռ . » և ստորագրել էր: Նշանավոր դերասանը մի անկյունում գրել էր . «Կատարվեց կամքը Արամազդի, ստորագրեցի հօգուտ երեք պետությունների լրտեսության մեղադրանքը . պետությունների անունը չեմ հիշում, բայց դա ի՞նչ կարևոր է . . . »:

Եկավ հուլիսը: Շոգը չոքել էր Երևանի ու բանտի սրտին: Լրանում էր շուտով երկու տարին այն օրից, երբ սկսվեցին մեծ դեպքերը Երևանում, և ես դարձա մի ուրիշ ես: Նախ շշուկով, ապա ավելի ու ավելի բարձրաձայն սկսեցին խոսել այն մասին, որ բոլոր աչքի ընկնող մարդկանց սկսել են քաղաքային բանտից

փոխադրել ներքին բանտ և որ շուտով պիտի դատեն նրանց: Հարյուրներ էին, այսպես կոչված, կուսակցական-կառավարական-հասարակական ակտիվիստները, և նրանք պիտի կանգնեն դատարանի առաջ: Ես հիշեցի ներքին բանտը, Դյուժինգրադը և նրա նախկին բնակիչներին: Իմ սիրտը լցվեց անասելի ծանրությամբ: Մի՞թե նորից այնտեղ: Մի՞թե ես էլ պիտի ընկնեմ այդ ցուցակը: Հենց միայն խորհրդավոր շենքում դատվելու փաստը ոչ մի լավ բան չէր խոստանում:

Հուլիսյան մի շոգ օր ներս մտավ հերթապահը:

— Հավաքիր իրերդ:

Ես հավաքում եմ իրերս և զգում ինձ վրա կալանավորների հայացքը: Ես շատ լավ գիտեմ այդ հայացքների նշանակությունը, ինքս այդ հայացքով նայել եմ «գնացականներին»: Ցավակցական այդ հայացքով մարդիկ նայում են հուղարկավորների ուսերին ծանրացած օրվա հերոսին: Ոմանք շշուկով սիրտ են տալիս . — Մի՛ վախենա, լավ կլինի: — Մեկն էլ ասում է . — Դու գնում ես տուն: — Ես հիշում եմ դասագրքով սովորած «անարգ, խայտառակ մահվան մատնված հունգարացի կոմսի» պատմությունը: Պետեֆի՛ . . .

Նույն ճանապարհով ենք անցնում երևի — պետական կրկեսի, Մարքսի և Նալբանդյանի փողոցներով: Ասում եմ երևի, որովհետև այս անգամ մեզ տանում են փակ ավտոներով, և դա հասկանալի է: Պետական հանցավորներին դատի են տանում: Մենք հիմա շա՛տ, շա՛տ կարևոր ապրանք ենք, որից պետք է շուտ ազատվել և թեթևանալ:

Մենք լույս ենք տեսնում խորհրդավոր շենքի արևահար բակում: Այս անգամ ես ընկնում եմ տասնչորսերորդ կամերան, Դյուժինգրադից ոչ հեռու: Այստեղ էլ կային ծանոթներ, մոտիկներ, անգամ ցանկալի մարդիկ և կային, որոնց ես գիտեի միայն թերթում տպված լուսանկարներից, բայց մոտիկից ծանոթ չեմ եղել: Նրանցից մեկը շարժվում էր անթացուպերով: Նրան ենթարկել էին ծանր կտտանքների: Նա շուտ-շուտ ծխում էր և բարեհոգի ժպտում ծանոթ և անծանոթ կալանավորներին, շարժում գլուխը . այդ մոտավորապես նշանակում էր՝ տեսա՞ր ինչ եղավ . . .

Այստեղ արդեն հայտնի էր, որ Երևան է ժամանել («ականջդ բեր ասեմ . . .») Սովետական Միության Գերագույն դատարանի զինվորական կոլեգիան և որ ահա, տեղի պիտի ունենա ահեղ դատաստանը: Պիտի դատեն, բայց ինչպե՞ս: Այդ մասին իր հեղինակավոր կարծիքը հայտնեց Մոսկվայից Երևան բերված տեղի Գեպեուի դատախազը: Նրա կարծիքով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատավորները կարևոր մարդիկ են, տեղի կունենա մարդավարի դատավարություն . վկաներով, պաշտպաններով . . . Բոլորովին այլ տեսակետի վրա էր կանգնած Երևանի Գեպեուի-մամուլի բաժնում աշխատողը: Նրա կարծիքով տեղի կունենա մինուտնի սուդ — այսինքն՝ րոպեական դատավարություն, այլապես մի քանի տարի կարող է տևել դատավարությունը: Դարձյալ նրա կարծիքով դատավարությունը ձևական բան կլինի և որ հիմա մեքենագրուհիները մեքենագրում են գնդակահարության դատապարտվածների ցուցակները . . .

Կամերայում տիրում էր լռություն . մարդիկ նայում էին իրար և աշխատում գուշակել, ի՞նչ է մտածում դիմացինն իր մասին, կգնդակահարե՞ն իրեն, թե՞ . . .

. . . . . .

Իհարկե, մամուլի բաժնի տեղական աշխատողն ավելի բանիմաց դուրս եկավ, քան Մոսկվայից բերված դատախազը: Հարյուրավոր մարդկանց, այսպես կոչված հասարակության «սերուցքի» դատավարությունը, որը կարող էր տարիներ տևել, շնորհիվ նոր տեխնիկայի հրաշքի, երեք գիշերում ավարտվեց: Երեք գիշեր ներքին բանտը չքնեց: Ներս էին մտնում, կարդում էին անուն-ազգանունները, տանում իրերով դեպի հայտնի անհայտությունը: Երբ կարդացին մամուլի բաժնի աշխատողի ազգանունը, նա գունատվեց և իրերը հավաքելիս շշնջաց կողքի նստածներին, — «տանում են», նա փակեց մատները և ցուցամատը երեք անգամ շարժեց, ինչպես շարժում են ատրճանակ կրակելիս: Ողջ գիշեր բանտի ընդարձակ բակից լսվում էր տրակտորի, թե տրակտորների հոհնդը: Նրանք հողի փոխարեն լռություն էին հերկում, խլացնելու համար դատապարտվածներին տանող ապրանքատարների, կարգադրությունների, հրամանների, չնախատեսված աղաղակների և բացականչությունների ձայներ: Դավադիր լռության փոխարեն գիշերը լեցուն էր դավադիր, խժալուր աղմուկով,

դրա փոխարեն երբ բացվում էր առավոտը, լռում էր ամեն ինչ, և տիրում էր մի հեղձուցիչ, ծանր լռություն: Մնանցողները, չնայած տանջող քաղցին, ոչինչ չէին կարող ուտել . նրանք այլևս չէին խոսում, չէին գուշակում, չէին ենթադրում, չէին վիճում, պառկում էին նրանք, աչքերը փակում կամ բաց, ոչինչ չտեսնող աչքերով նայում առաստաղին և սպասում իրենց հերթին:

. . . . . .

— Սա մի ահավոր, սպանիչ լինելու չափ ձգձգված, բայց խորապես շեքսպիրյան ողբերգություն է . . . Ե՞րբ, ե՞րբ վերջապես պիտի ինչնի վարագույրը . . .

Քառասունութ ժամ տանջալից քննությունից հետո, ոտների վրա կանգնելու անկարող, չորս պետությունների լրտեսության մեջ մեղադրվող՝ պետական թատրոնի մեծ դերասանն այսպես է բացականչել՝ վերադառնալով կամերա և փլվելով անկողնուն: Ծիծաղելի ողբերգություն, թե արյունոտ կատակերգություն՝ այնուամենայնիվ ներկայացումը վերջացավ: Տեղի ունեցավ . . . Ի՞նչ տեղի ունեցավ . . . Կատարվեց թվաբանական չորս գործողություն . նախ գումարեցին, ապա բազմապատկեցին, հետո բաժանեցին և, ի վերջո, համանման գործողությամբ փակեցին խնդիրը: Մնացորդն ստացվեց 40: Ես այդ քառասունից մեկն էի: Դրանք այն համեմատական երջանիկներն էին, որոնք իրենց ծոծրակին չզգացին ատրճանակի փողի սառնությունը: Հանման սառը, ապա տաք գործողությամբ ավարտվեց գործը, բարդ հանրահաշիվը թողնելով սերունդներին: Քառասուն մնացորդներն ստացան տասից-տասնհինգ տարվա բանտարկության վճիռ, կլոր թվով՝ չորս դար՝ քառասուն հոգուն:

. . . . . .

« — Պետք է քնել, — ասում եմ ես ինձ, — և չհիշել հազար անգամ հիշվածը: Վաղ առավոտյան դու կթողնես քնած ճամբարը և Բալաշովի հետ կհայտնվես Առաջինում: Իսկ հիմա քնե՛լ, քնե՛լ»:

Ես փակում եմ աչքերս քնելու հաստատ որոշումով, բայց որովհետև ամեն որոշում, լավ թե վատ, փախցնում է մարդու քունը, ես չեմ կարող քնել: Ես հիշում եմ, թե ինչպես մի օր, գիշերով, քառասուն մնացորդներին ապրանքատարով

քաղաքային բանտ տարան: Մեր համեմատական երջանկությունը ոչ չափ ուներ, ոչ վախճան: Մենք գնում էինք դեպի համեմատական ազատություն: Մենք հիմա դատված ենք, և ոչ ոք իրավունք չունի կես գիշերով մեզ տանել ծեծել: Մենք, որպես դատվածներ, իրավունք ունենք ծանրոցներ ստանալ տնից, անգա՛մ տեսակցություն պահանջել հարազատների հետ: Մենք . . .

Նախ մեզ ոչ միայն չտարան դատվածների կամերաները, այլև ընդհանրապես ոչ մի կամերա չտարան: Բանտի խցում, կողք-կողքի՝ ընդհանուր պատով անջատված, կանգնած էին երկու կավաշեն օթևաններ, որոնք իրենց լույսն ստանում էին տանիքին կանգնած մի տեսակ փոքրիկ, ապակեպատ նոյան տապանից: Այդ ոճն ունեն թուրքական բաղնիքի տանիքները: Դա բանտի շների կացարանն էր, որը հայտնի էր բոլորին «շնանոց» անունով: Ո՞ւր տարան շներին, գուցե առա՞ջ քաշեցին կամ գուցե ցրեցի՞ն նրանց շտատը, գտնելով, որ մարդն այնքան է հասունացել, որ կարող է կատարել այն, ինչ նրանք են կատարում: Գուցե, գուցե: Փաստն այն էր, որ մեզ բաժանեցին երկու հավասար մասի և տեղավորեցին ահա այդ հողե հատակով կացարաններում: Մեզ խստիվ առանձնացրին կալանավորներից և զբոսանքի էին հանում կեսգիշերին, երբ ամբողջ բանտը քնած էր: Մեզ արգելվեց ծանրոցներ ստանալ: Իսկ երբ մենք ասացինք, որ դատվածներին ըստ օրենքի պետք է տեսակցություն տրվի, ապա մեզ քաղաքավարի կերպով բացատրեցին, որ կան դատվածներ և կան դատվածներ, մենք միութենական գերագույն դատարանի զինվորական հանձնաժողովի կողմից ենք դատված, համարվում ենք պետական ծանր հանցագործներ և որ մեզ համար գոյություն ունի օրենքով նախատեսված հատուկ ռեժիմ . . .

Մեր քսանյակն ուներ մեկ ժողովրդական կոմիսար, պետք է ասել՝ միակը, որը ողջ մնաց: Կարծես շուտով համերկրային ջրհեղեղ էր սպասվում, մեր կացարանն իր երկու բաժանմունքներով և երկու կիսագմբեթներով պիտի լողար ջրերի վրա և այդ մեկ ժողովրդական կոմիսարի կյանքը խնայված էր, որ մարդկային այս տեսակը չանհետանա աշխարհից: Ի պատիվ Նոյի՝ պիտի ասել, որ նա այդ գործն ավելի լավ էր կազմակերպել, վերցնելով ամեն տեսակից արու և էգ . . .

Մեր քսանյակում կային երեք բանաստեղծներ: Առաջին հայացքից կարող էր թվալ, որ, չգիտես ինչու, թույլ էր տրված մեծ շռայլություն, որ երեքից երկուսը միանգամայն ավելորդ են, մանավանդ, որ երեքից երկուսը ծնվել են միևնույն քաղաքում: Նույնը կարելի է ասել երկու ճարտարապետների մասին, որոնք, ճիշտ է, ստեղծագործական տարբեր անհատականությամբ օժտված մարդիկ էին, բայց կարող էր դիտվել, որ նրանցից մեկն ու մեկն ավելորդ է, մանավանդ, որ նրանց վերաբերմամբ նույնպես կիրառված չէր հեռատես Նոյի ընտրական մտածված սիստեմը: Ավելորդ չէր լինի հիշատակել այն, որ այս երկու ճարտարապետներից մեկը խորհրդավոր տան բարդ նախագծի հեղինակն էր: Հատկանշական է և այն, որ երբ կալանավոր ընկերները նրան զանազան հարցեր էին տալիս իր կառուցած շենքի այս կամ այն մանրամասնության մասին, ճարտարապետը խոսքը գցում էր կտուր, մի բան, որ բավականին դժվար գործ էր, որովհետև նման հարցերով նրան դիմում էին ներսում, իսկ ներսից խոսքը կտուր գցելը կապված էր որոշ դժվարությունների հետ:

Մեր քսանյակն ուներ իր բժիշկը, որն անմիջապես շրջապատվեց ուշադրությամբ և խնամքով: Կալանավորները գիշեր-ցերեկ դողում էին նրա առողջության վրա և թույլ չէին տալիս, որ նրա քթին ճանճ նստի, քաջ գիտակցելով, որ բժիշկը հիվանդ մարդկության հավիտենական ուղեկիցն է եղել և պիտի լինի:

Մեր քսանյակն ուներ իր քարտուղարը, որը ոչ այլ ոք էր, եթե ոչ Երևանի քաղաքային կոմիտեի քարտուղարներից մեկը: Այն էլ պիտի ասել, որ կուսակցականները մեր քսանյակում կազմում էին մեծամասնություն, մի հանգամանք, որ չէր կարող թույլ տալ քարտուղարին կազմակերպել նրանց և ղեկավարությունը վերցնել իր ձեռքը, քանի որ, ինչպես հայտնի է, ղեկավարությունը վերցնելու համար ոչ թե մեծամասնություն պետք է լինել, այլ փոքրամասնություն: Այն էլ պիտի ասել հանուն արդարության, որ քարտուղարը երբեք չմտածեց ղեկավար դառնալու մասին, որովհետև նման մարմաջով մարդիկ տարվում են, երբ ապրում են մի հասարակության մեջ, ուր կան կուշտեր և քաղցածներ: Իսկ մեր փոքր համայնքի անդամներն անխտիր քաղցում էին, որով և ղեկավար դառնալու միտքը զրկվում էր իր իմաստից:

Ունեինք մենք մեր մեջ մի նշանավոր ինժեներ, բայց նա իր ինժեներությամբ չէր, որ դարձավ մեր համայնքի սիրելին, ոչ էլ իր հանգիստ, բարեհամբույր վարք ու բարքով: Նա օժտված էր զարմանալի հիշողությամբ: Օրը երկու անգամ, առավոտյան և երեկոյան, շաբաթներ շարունակ նա պատմում էր Տոլստոյի «Աննա Կարենինան» և «Պատերազմ և խաղաղությունը»: Նա ոչ թե պատմում էր այդ վեպերի բովանդակությունը, ոչ, նա առանց գրքի կարդում էր այդ վեպերը և չէր կարելի առանց գեղագիտական բարձր հաճույքի լսել նրան:

Մեր համայնքում կային պետական աչքի ընկնող գործիչներ, նաև մի ականավոր գիտնական, որը կլիներ մոտ վաթսուն տարեկան . նա դատապարտված էր քսանհինգ տարվա բանտարկության և չափազանց լավ էր զգում իրեն: Նախքան վճիռն ստանալը նա այն սխալ կարծիքն ուներ, որ ինքը երկու-երեք տարվա կյանք ունի: Քսանհինգ տարվա դատավճիռ ստանալուց հետո մարդը վերածնվեց: Անկասկած պետությունը մի բան գիտե, որ նրան քսանհինգ տարի է տվել . այդ նշանակում է, որ նա պարտավոր է այդքան էլ ապրել՝ պետությանը պարտք չմնալու համար:

Կային հաճելի, շատ հաճելի մարդիկ մեր համայնքում, հենց, թեկուզ, վերցնենք շինանյութեր հայթայթող այն բարձր պաշտոնյային, որին մեղադրանք էր ներկայացված Սիբիրի անտառները կողոպտելու՝ Երևանի տրամվայի գիծը շպալներով ապահովելու համար: Շատ բանով էր նշանավոր այս մարդը, երբ նա լողանում էր, թվում էր, թե բաղնիք է թափանցել թավամազ մի արջ: Իր ասելով, կանանց մեջ ունեցած իր հաջողության համար նա պարտական է այդ հանգամանքին: Նրա կինը հայ մեծագույն դերասանուհիներից մեկն էր, որով նա ակնհայտ կերպով պարծենում էր: Սրամիտ էր նա, պատրաստաբան և կարող էր իրար ետևից անեկդոտներ պատմել գիշեր-ցերեկ և երբեք չկրկնել իրեն:

Ի բնե և ի ծնե խանդոտ էր նա և չէր տանում, երբ խոսում էին իր կնոջ՝ սիրված դերասանուհու մասին, և իզուր չէր, որ բանաստեղծներից մեկը նրան մի օր անվանեց Թայչարուխցի Օթելլո:

Շոգ էր մեր կացարանում, առաստաղից թափանցող օդը չէր հասնում մեզ, հողե հատակին փռված մեր անկողինները քրտնամխում էին, և մենք հագնվում էինք մոտավորապես այնպես, ինչպես լողափում ավազի վրա թավալվողները: Այդ

պատճառով էլ մենք անհամբերությամբ սպասում էինք կեսգիշերին, երբ մեզ տասը րոպեով դուրս էին հանում զբոսանքի: Մենք շնչում էինք գիշերային թարմ օդը, և մեզ տիրում էր հարաբերական երջանկության զգացումը:

Առաջին իսկ րոպեից մեր համայնքը բաժանվեց երկու մասի՝ լավատեսների և հոռետեսների: Լավատեսները հոռետեսներին անվանում էին ագռավներ, իսկ հոռետեսները լավատեսներին՝ դեղձանիկներ: Ըստ լավատեսների, ինչ որ եղավ՝ եղավ, երևի այս էին պահանջում պետական շահերը, սրանից հետո ամեն ինչ լավ կլինի: Հիմարություն է մտածել, որ այս քսան հոգին երկու հարյուր տարի պետք է անցկացնեն բանտում: Պետություն է, մի օր բռնեց, մի օր էլ բաց կթողնի, կասի՝ կորե՛ք ձեր տները . . .

Ագռավներն ունեին իրենց խմբակի հիմնը, նրանց սիրած երգը հենց իրենց անունով էլ կոչվում էր՝ «Սև ագռավ»: «Սև ագռավ, սև ագռավ, մանկության օրերից կռռացիր, կռկռացիր իմ գլխի վրա . ի՞նչ ես ոլորվում հիմա էլ, իմ գլխին, մի՞թե զգում ես անկումն իմ, ախ, սև ագռավ, ես քոնն եմ . . .»: Չի կարելի ասել, որ երգում բացարձակապես կոնֆլիկտ գոյություն չուներ, երգի սկզբի տներում համառորեն ժխտվում էր անձնատվությունը, կար անընդհատ պնդում այն մասին, որ՝ «ես քոնը չե՛մ», բայց, ի վերջո, մթնոլորտն ավելի շիկանում էր, և երգը վերջանում էր զոհի բացարձակ պարտությամբ, — «ա՛խ, սև ագռավ, ես քո՛նն եմ . . .»: Ու տիրում էր երգից հետո մի մռայլ, ճնշող լռություն:

Ագռավները դեղձանիկների խմբակին վերագրում էին «Մի վազեր այդչափ արագ» մանկական, միամիտ երգը: Երբ վերջիններն ազատություն էին տալիս իրենց լավատեսությանը և խոսքերն իրարից խլելով ապացուցում էին, որ հուսահատվելու ոչ մի պատճառ չկա և որ, վերջիվերջո, արդարությունը պիտի՛, այո՛, պիտի՛ հաղթանակի, Թայչարուխցի Օթելլոն նշան էր տալիս, և ագռավները մի մարդու նման երգում էին «Դեղձանիկների հիմնը» .

Մի՛ վազեր այդչափ արագ,
Իմ աղվորիկ նապաստակ,
Շատ փոքրիկ ես տակավին,
Թաթիկնդ կհոգնեն . . .

Սի՛րտ պետք էր, որ դիմանար . . .

Հոռետեսները լսել անգամ չէին ուզում դեղձանիկների այս դայլայլները և կոռում էին սև ագռավների նման, — բոլորիս վրա մի սև խաչ, լավագույն դեպքում պիտի մեռնենք մութ ու անել գնդաններում և բանտերում: Կարող է այդ բախտին էլ չարժանանանք, եթե ներքին և արտաքին դրությունը ծանրանա, մի գիշեր կտանեն ու մեկ-մեկ կթրխկացնեն: Ահա թե ինչ:

Դեղձանիկները հուզված էին, բողոքում, — մենք դատված ենք, և ոչ մի օրենքով մեզ ոչ ոք չի կարող գնդակահարել: — Ագռավները կռկռում էին, — մեզ մոտ ամեն ինչ ենթարկվում է հեղափոխական նը՛-պա՛-տա՛-կա՛-հար՛-մա՛-րու՛-թյանը . . .

Բայց ընդանրապես պետք է ասել, որ մեր համայնքն ապրում էր հաշտ ու խաղաղ: Ի՞նչ ուներին բաժանելու: «Պատերազմ ու խաղաղություն» էին լսում, անեկդոտների մրցում էին կազմակերպում, անձնատուր լինում վերջին «երեք գիշերների» մռայլ հուշերին: Մեր համայնքի անդամներից մեկը, որի ազգանունը մենք սովոր էինք կարդալ թերթերում, գրեթե ամեն օր, կառավարական որոշումների տակ, անհավատալի մի բան պատմեց այդ օրերին . դատելուց հետո նրան խոթում են մի բանտասենյակ, ուր ոչ ոք չի լինում: Երբ ուշքի է գալիս մինուտնի դատի մղձավանջից, սկսում է շրջել կամերայում: Կամերայի պատերին նկատում է մակագրություններ: Այնտեղ նա կարդում է ծանոթ ընկերների թողած վերջին տողերը: Այո՛, դա եղել է մահվան դատապարտվածների վերջին հանգրվանը: — «Երեք րոպե տևող դատավարությամբ դատապարտված եմ գնդակահարության . կեցցե հայ ժողովուրդը», — գրում է ժամանակի լավագույն գրողներից մեկը: — «Դատապարտված եմ գնդակահարության: Մեռնում եմ հանգիստ խղճով: Կեցցե՛ մեր մեծ ղեկավարը» . — գրել և ստորագրել է ժողովրդական սիրված կոմիսարը: «Դիալեկտիկական մատերիալիզմով զինվելը բավական չի գնդակահարվելու համար . կեցցե՛ մեր մեծ գործը», — գրում է ժամանակի հմուտ տեսաբաններից մեկը, որն աչքի է ընկել իր խրթին լեզվով:

Ստացվում է ահավոր մի բան: Այդ ամենը մոռանալու համար նրանք որոշում են բանաստեղծներից մեկի դրական գործունեության 20-ամյակը տոնել: Մեր

կացարանում պետական միակ գույքը հայտնի թիթեղե ամանն է, որի հարթ կափարիչը փայլում է այսօր մաքրությունից: Նրա վրա տեղ է գրավում հոբելյանական հանդեսի նախագահը, մեր միակ ժողկոմը: Բանալով հոբելյանական հանդիսավոր նիստը, նա զեկուցման համար խոսք է տալիս երկրորդ բանաստեղծին: Հայտնի է, որ զեկուցողն իր ժամանակին մի քանի հոդվածներ է տպել հոբելյարի դեմ, այստեղ սակայն մոռացվում են բոլոր անձնական մանր կրքերն ու քինախնդրությունները: Զեկուցողը բարձր է գնահատում հոբելյարի տեղն ու դերը ժամանակակից պոեզիայում, ափաշկարա կերպով աչք փակելով բանաստեղծի գաղափարական սայթակումների վրա:

Այնուհետև ողջույնի խոսքերով հանդես են գալիս կուսակցության, կառավարության, նկարիչների, ճարտարապետների, գիտնականների, տեխնիկական ինտելիգենցիայի ներկայացուցիչները: Պետական թատրոնի կողմից հանդես է գալիս թատրոնի մեծ դերասանուհու օրինական ամուսինը: Ուրիշ ելք չկար: Համերգային բաժինն անցնում է բարձր մակարդակով: Տեղի են ունենում ցած ձայնով խմբերգեր, մեներգեր, իսկ երրորդ բանաստեղծը կարդում է հոբելյարին նվիրված մի սիրուն բանաստեղծություն:

Վերջում՝ իհարկե բանկետ: Նստում ենք բոլորս շրջանաձև, ամեն մեկի առաջ իր օրվա ընթացքում խնայած հացը, իսկ մեջտեղը՝ Երևանի անմահական, հազարաստղանի ջուրը: Օրվա թամադան նույն ինքը՝ հանդիսավոր նիստի նախագահն է . խմում ենք հոբելյարի, ներկաների կենացը և նրանց հիշատակին, որոնք խիստ հարգելի խատճառներով չկարողացան իրենց մասնակցությունը բերել այս մեծ և պատմական ու պատվական երեկոյին, խմում ենք, խմում մինչև վերջին կաթիլը:

. . . . . .

. . . Ճամփանե՛ր, ճամփանե՛ր: — Նորից աշուն էր, աշունը փչեց իր դեղին բուռները և Նորքից, Կոնդից ու Քանաքեռի բարձրունքից քշեց անթիվ, անհամար դեղին տերևներ: Նրանցից մի քանիսն ընկան բանտի բակը, ընկան ու անշարժացան:

Մի օր, ուշ երեկոյան, երբ մենք սպասում էինք մեր սովորական գիշերային զբոսանքին, դուռը բացվեց, և ներս մտան երեք կանաչ գլխարկավորներ:

— Իրերը հավաքել, — եղավ հրամանը:

Ու դուրս եկան:

— Տանում են գնդակահարեն, — կասկածեցին ագռավները:

— Էտապի են հանում, — դայլայլեցին դեղձանիկները, միաժամանակ վախենալով այն մտքից, որ ագռավները կարող են ճիշտ դուրս գալ:

Մենք իրերով առաջնորդվեցինք բանտի դրսի բակը: Այնտեղ բացվեց մի դուռ, և մենք մտանք մի որջ, որը չուներ ոչ մի լուսամուտ: Նստեցինք իրերի կապոցներին և սպասեցինք, — ովքե՞ր պիտի հաղթեն, ագռավնե՞րը, թե՞ . . .

Կեսգիշերին դուռը բացվեց: Դռների մեջ կանգնածներից մեկը կարդաց երկու ճարտարապետների ազգանունները: Նրանց հրամայվեց դուրս գալ: Առանց իրերի:

Առանց իրերի: Ա՛յս էր կասկածելին և սարսափելին: Առանց իրերի, ինչո՞ւ առանց իրերի: Ագռավները փակեցին իրենց աչքերը, — մենք այդպես էլ գիտեինք, — կարծես ասում էին նրանց փակ աչքերը: Առաստաղին կպած լամպի աղոտ լույսի տակ երկու ճարտարապետների անտեր մնացած իրերի երկու կապոցները չարագուշակ խորհուրդ էին ստանում, հատկապես նրանցից մեկը: Ճարտարապետներից մեկի աղյալը մուգ-կարմրագույն էր:

Ոչ-ոք չէր խոսում: Եվ ի՞նչ խոսեին: Ագռավներն իրենց ասածն ասել էին, դեղձանիկները դայլալելու հիմք չունեին, լսվում էր միայն ծխողների լուցկիների չրթոցը: Թայչարուխցի Օթելլոն բարձր հազաց: Նրան սաստեցին այս ու այն կողմից, — «սը՛ս», — նա երկու ձեռքերը բռունցք արած վեր բարձրացրեց ու թափով խփեց ծնկներին: Այս նշանակում էր, — «ի՞նչ է, հազալու իրավունք չունե՞մ . . .»: — Հետո ժպտաց: Ժպիտը վարակիչ չէր: Ուր որ ընկավ, կորավ նրա ժպիտը, և նա խեղճացավ:

Լռություն, լռություն, լռություն, այնպիսի մի լռություն, որը բանաստեղծի ասածի նման աճում է, աղմուկ դառնում: Ա՛խ, եթե հիմա դուռը բացվեր և ներս խոթվեին երկու ճարտարապետները, երկուսն էլ գրեթե մի բոյի, այն ժամանակ, այո՛, այն ժամանակ ամեն ինչ կգնար իր բնականոն ճանապարհով, և այն ժամանակ դեղձանիկները ցույց կտային ագռավներին: Ասենք, ի՞նչ կարող էին ցույց տալ, պարզապես պիտի կտցահարեին, գիշեր-ցերեկ կտցահարեին այդ սև ագռավներին:

Պետք էր որ լուսաբաց լիներ, երբ լսվեց ավտոյի հռինդ, հետո լսվեց, թե ինչպես բացվեց բանտի դուռը, և լսվեցին ոտնաձայներ: Երկու անգամ երկուսի նման պարզ էր, որ գալիս են տանեն հաջորդ զույգին կամ զույգերին: Տեսնես ո՞ւր են տանում, — ո՞ւր պիտի տանեն, նման դեպքերում ո՞ւր են տանում, — աներանց տո՞ւն . . . խե՛ղճ ինժեներներ . խե՛ղճ մենք:

Դուռը:

Դուռը բացվեց, և հանգիստ քայլերով և ավելի հանգիստ դեմքով ներս մտան երկու ինժեներները: Ա՛յս ի՛նչ բա՛ն է՛ր: Ագռավները լայն բացին աչքերը: Բայց կտուցները փակ մնացին: Նույն դրության մեջ էին գրեթե դեղձանիկները:

— Տղերք, ձեզ ո՞ւր տարան, — շշուկով կարողացավ հարցնել ժողովրդական կոմիսարը:

— Մեր հին տունը, — պատասխանեց ճարտարապետներից մեկը ոչ շշուկով:

— Նալբանդյան փողոց, լրացրեց մյուսը:

— Չվախեցա՞ք, — հարցրեց մեկը:

— Կվախենայինք, եթե . . .

— Մարդատար շիկարնի ավտոյով տարան մեզ, վախենալու ժամանակ չեղավ, — լրացրեց մյուսը:

— Ինչո՞ւ տարան, — հարցրեց բժիշկը:

Յատուկ Պոէմ

— Ինչ-որ դատարկ-մատարկ հարցերով, — պատասխանեց մեկը և դարձավ մյուսին, — լսիր, դու մի բան հասկացա՞ր, ինչո՞ւ մեզ տարան: Ես որ բան չհասկացա . . .

— Ես էլ բան չհասկացա, — պատասխանեց մյուսը:

Մենք էլ բան չհասկացանք: Վերջապես բոլորս անխտիր եկանք մի հասկացողության: Այս լավ նշան էր: Եվ, վերջապես, ի՞նչ կարևոր է, թե ինչո՞ւ տարան, կարևորն այն է, որ սաղ-սալամաթ ետ եկան:

— Մեզ հյուսիս են տանում, տղերք, — ասաց մեկը:

— Տանում են կորցնեն, — կռռաց մի ագռավ:

— Հյուսիսը շատ լայն հասկացողություն է, կոնկրետ ո՞ւր են տանում, — ուզեց խնդիրը ճշտել նա, առանց որի ստորագրության թերթերում լույս չէր տեսնում ոչ մի որոշում:

— Չասացին: Այնքանն էլ որ ասին, շնորհակալ եղեք:

— Դա ի՞նչ ասելու բան է, բա խոմ հարավ չե՞ն տանելու . . .

— Տղերք, դրանք միշտ խաբում են, կա չկա, մեզ արևմուտք են տանում, — ասաց Օթելլոն՝ մատը ճակատին ցցելով: Այս անգամ նրա ժպիտը վարակիչ էր, մինչև անգամ եղան ծիծաղողներ:

Համեմատական երջանկությունը կատարյալ էր և ավելի կատարյալ դարձավ, երբ վերջապես առավոտը բացվեց և դուռը բացվեց: Մեր որջը ողողվեց աշնանային առավոտյան թարմ օդով: Բերին մեր օրաբաժինները, երկու կտոր շաքարը, թեյանման թեյը և եղավ մի րոպե, երբ դժվար էր տարբերել ագռավները դեղձանիկներից, որովհետև ագռավները ծածկվեցին դեղձանիկների փետուրներով: Այս փոփոխությունը սակայն աննախադեպ չէր, այսպիսի դեպքեր՝ որքա՛ն ասես: Բավական էր մի փոքրիկ, անբարենպաստ հով և կքշեր, կտաներ արհեստական փետուրները: Նույնը և պատահել է դեղձանիկների հետ: Հեռու չգնանք, հենց այդ գիշեր՝ և՛ ձևով, և՛ բովանդակությամբ դեղձանիկները

Յատուկ Դրէմ

շատ քիչ էին տարբերվում, ավելի շուտ ոչ մի բանով չէին տարբերվում ագռավներից: Նման դեպքերում նրանք չէին չարախնդում, մեկ-մեկու չէին մեղադրում անսկզբունքայնության մեջ, նրանք բարեհոգի կերպով լռում էին, որովհետև գիտեին, որ նույն ուղտը վաղը կարող է չոքել իրենց դռանը, նույն ծուխը նույն հաջողությամբ կարող է բարձրանալ իրենց երդիկից:

Ճամփանե՛ր, ճամփանե՛ր: Կեսօրից հետո մեզ իրերով լցրին ապրանքատար երկու մեքենա և ծածկեցին բրեզենտով: Մեքենայում տեղ գրավեցին նաև երկու զինված պահակներ: Մեզ հրամայվեց չշարժվել, ոչ մի բանով չմատնել, որ բրեզենտի տակ մարդիկ են պահված: Այսպես փոխադրում են արգելված ապրանք կամ սպանդանոցից տանում են մսամթերք: Փոխադրության այս արտակարգ ձևը տակն ու վրա արավ մեր լավատեսությունը: Միակ մխիթարությունն այն է, որ ցերեկ էր: Եթե գիշեր լիներ, կարելի էր խելագարվել: Սակայն սրանց համար ի՞նչ նշանակություն ունի ցերեկ կամ գիշեր: Քաղաքից դուրս, ամայի դաշտում կատարվող մութ գործերի համար ի՞նչ նշանակություն ունի ցերեկ կամ գիշեր:

Մեքենաները շարժվեցին: Մենք լսում էինք անցնող ավտոների և տրամվայների աղմուկն ու զվաթ զնգոցը: Ո՞ր փողոցի վրա ենք: Բայց ահա աղմուկը քիչ-քիչ նոսրացավ: Կասկած չկա, որ մեզ տանում են քաղաքից դուրս: Ո՞ւր են տանում մեզ, ո՞ւր եք տանում մեզ: Այսպես տանում են գողացած ապրանքը: Գողացած ապրանք չենք, ի՞նչ ենք: Գողացան մեզ մեր տներից, մեր հարազատներից, մեր ժողովրդից, գողացան մեզ: Վերադարձրեք մեզ մեր օրինական տիրոջը, մենք ժողովրդի թշնամիներ չենք, կեցցե՛ ժողովուրդը . . .

Ավտոները կանգնեցին: Հիմա որ լռություն է, հիմա որ . . .

Բրեզենտի ծածկոցը բարձրացրին:

— Ոտքի՛ . . .

Արևը խտտում է մեր աչքերը: Մեր ոտները թմրած են: Նայում ենք շուրջը: Այս ի՞նչ բան է, տղե՛րք: Կեցցե՛ . . . այս ի՞նչ երջանկություն է, մեզ աքսոր են տանում . . . կայարա՛ն:

. . . Կեցցե համեմատական երջանկությունը: Մենք գտնվում ենք կայարանի հրապարակում: Այստեղ մեզ սպասում է բացառիկ ընդունելություն՝ ամենաբարձր մակարդակով: Կողմնակի ոչ մի քաղաքացի: Ոչ էլ ուղղակի: Ընդարձակ հրապարակը գտնվում է զինվորական հսկողության տակ: Այստեղ-այնտեղ երևում են զինված պահնորդներ՝ վարժեցրած շների հետ: Այս բոլորն, իհարկե, արվում է մեր ապահովության համար: Նրանք արգելել են ամեն երթևեկ և փակել բոլոր ճանապարհները: Առանց այս հոգատար միջոցառումների ժողովուրդը կարող է հարձակվել . . . ո՞ւմ վրա . . . Իհարկե, իր թշնամիների, մե՛զ վրա, մե՛զ վրա: Նրանք մեզ բզիկ-բզիկ, ակնոցավոր օձի լեզվով ասած՝ հողմացրիվ կանեն, հում-հում կուտեն: Մենք հիմա պաշտպանված ենք ամեն կողմից շներով և մարդկանցով: Մեզ չեն գնդակահարում, մեզ տանում են հյուսիս, աքսոր: Կեցցե՛ մարդասիրությունը, կամ այն մյուս բառով ասած՝ հո՛ւմ . . . հո՛ւմ . . . հումանիզմը: Շնորհակալությո՛ւն, շնորհակալությո՛ւն՝ հոգատարության համար: Հո՛ւմ-հո՛ւմ-հումանիզմի՛ համար:

. . . . . .

— Հո՛ւմ . . . հո՛ւմ, — ես ուզում եմ լայն բանալ իմ աչքերը, բայց դրանից արցունքներն ավելի առատ են հոսում բարձին: Ծիծաղելի է, ես ոչ ավել, ոչ պակաս՝ հեկեկում եմ: Այսպես հեկեկում էի ես, երբ փոքր էի, — հո՛ւմ . . . հո՛ւմ . . .

— Հայդո՛ւկ, ի՞նչ ես թնկթնկում . . . Երա՞զ տեսար, — լսում եմ Աշոտ դայու քնահար ձայնը:

— Այո, ասում եմ ես, — երազ տեսա, ծանր երազ . . .

— Ի՞նչ տեսար, — հարցնում է Աշոտ դային երևի առանց աչքերը բանալու:

— Աքսորում էին, ու մենք ուրախ էինք . . .

— Հետո՞ . . .

— Հետո . . .

Բայց ես ուզում եմ թեթևացնել խավարը, խեղդող օդը, հիմա ես անզուսպ ցանկություն ունեմ մի ծիծաղելի բան լսել կամ ասել ու ծիծաղել, որ բարաքը զարթնի, ծիծաղել Մեֆիստեֆելի պես, այսպես, — հա՛-հա՛-հա՛-հա՛-հա՛ . . .

Ես, իհարկե մտքումս եմ ծիծաղում և դա ինձ հաջողվում է,
հա՛-հա՛-հա՛-հա՛-հա՛ . . . Մեֆիստոֆե՛լիա . . .

— Հետո՞, — անհամբերության նշաններ է ցույց տալիս Աշոտ դային:

— Հետո . . . երազումս մի մարի . . .

— Մոտս եկավ հարցմունքի . . . վե՛րջ տուր . . .

— Այդպես չի եղել, — առարկում եմ ես, — Երբ մեզ աքսորեցին, մայրս դեռ ողջ էր: Նա իմ քննիչին դիմում է գրել, այսպես .

Երազումդ մի մաքի
Մոտդ եկա՞վ հարցմունքի,
Ասա՞ց, — ապրի՛ քո բալեն,
Ո՞նց էր համը իմ ձագի . . .

— Դու նախ իրավունք չունես, — ասում է Աշոտ դային, — Թումանյանի ասածները քո ուզածի պես շուռ ու մուռ տալու: Այս մեկ . . .

— Երկրո՞րդ, — հարցնում եմ ես:

— Երկրորդ՝ քնիր, վաղ առավոտյան . . . Առաջին . . .

Ու քնում է, կամ ո՞վ գիտե, ձևացնում է որ քնած է:

. . . . . .

. . . Մենք, համաձայն հրամանի, իջնում ենք մեքենաներից և իրերը գրկած կամ շալակած՝ հերթի կանգնում: Մեկ-մեկ: Աչք-ծոծրակ: Հետո առաջ ենք շարժվում: Առաջնթացներն արդեն խուզարկվում են, մեկ-մեկ բարձրանում են վագոն:

Խուզարկելիս վերցնում են ծխախոտները, մախորկան . . . ա՞յս ինչ նորություն է:

Վագոնը հեռվից մարդավարի, սովորական վագոն է, միայն մոտենալուց հետո կարելի է նկատել, որ պատուհանները փոքր են գյուղական խրճիթների պատուհանների նման և զարդարված են երկաթե խիտ ճաղերով: Վագոնի միջանցքը հագեցած է բանտահոտով: Այս այն հոտն է, որը միայն կալանավորին է հայտնի: Նկարագրել այն դժվար է: Ասել, որ դա գարշահոտություն է, ճիշտ չէր լինի, որ հաճելի է այդ բույրը, այդ էլ կլիներ չափազանցություն: Դեղատների հոտն, օրինակի համար, մեկին կարող է դուր գալ, մյուսին ոչ, բանտահոտը չի կարող դուր գալ որևէ մարդու, թեև, կրկնում ենք, դա գարշահոտություն չէ: Դա, մի տեսակ, ինչպես բացատրեմ, պաշտոնական հոտ է, որը կալանավորին ներշնչում է մի տեսակ լրջություն և մի տեսակ զգաստություն:

Վագոնն ունի իր կուպեները, կուպեներն ունեն իրենց դռները, որոնք երկաթապատված են: Կուպեները երեքհարկանի են, իսկ հարկերը՝ միակտուր: Ամեն հարկում պիտի աշխատի ապրել չորս մարդ: Լավ չզգալու համար ստեղծված են օբյեկտիվ և սուբյեկտիվ բոլոր հնարավորությունները: Նստելիս պետք է քիչ կռանալ, պառկելիս պետք է աշխատել որքան կարելի է կարճահասակ լինել . կանգնելու մասին խոսք լինել անգամ չի կարող: Մնացյալն ինչես բանտում: Սուպի փոխարեն տալիս են մանր, աղի ձուկ: Մնացյալն ինչպես բանտում: Այստեղ նկատվում է ավելի մեծ հոգատարությո՛ւն . չեն ուզում, որ ծխելով վտանգենք մեր առողջությանը կամ դռան անցքից ներս նայող պահակների տեսողությունը . . . Օրվա ընթացքում տալիս են միայն երեք անգամ ծխելու մախորկա: Մնացյալը ինչպես բանտում: Երկու մեջտեղ պառկողները դժբախտ են, նրանց անհանգստացնում են երկու կողմից: Բայց նրանք կարող են նայել ճաղապատված պատուհանից և դիտել կառամատույցից՝ անկապ պատկերներ: Ուրեմն, նրանց կարելի է մինչև անգամ նախանձել . . . Մնացյալը ինչպես բանտում:

Երեկոյան մեր վագոնը ցնցվեց և առաջ շարժվեց: Ուզեցինք ասել՝ «Մնաս բարով, Երևան», բայց ետ դարձավ ու նորից ցնցվեց: Ետ, առաջ: Վագոններ են կցում:

— Ուրեմն գնում ենք, — ասում է մեկը, և տիրում է լռություն:

— Նոր գլխի ընկավ . . .

— Երանի՛ նրանց, որոնց ոսկորները մնացին Երևանում, — կոկռում է սենտիմենտալ մի ագռավ, — մեր ոսկորները . . .

— Մեզ դեռ ծաղիկներո՛վ պիտի դիմավորեն, — դայլայլում է մի դեղձանիկ երրորդ հարկից:

Բացվում է դռան ծանոթ, վաղածանոթ քառակուսին, ու երևում են պահակի նախ զույգ կապույտ աչքերը, ապա արագ-արագ բացվող-խփվող բերանը .

— Այստեղ խոսելն արգելված է: Դուք Երևանի բանտում չեք, — ասում է բերանը, և քառակուսին փակվում է: Մարդը ճիշտ էր ասում, մենք Երևանի բանտում չենք: Ինչպես էլ իմացավ . . .

Ու նորից լռություն:

. . . Գնացքն այնքան ետ ու առաջ էր արել, որ երբ գիշերը դուրս եկավ Երևանից, ոչ ոք չզգաց: Միայն երբ տևական դարձավ անիվների աղմուկը, մենք հասկացանք, որ գնում ենք: Ո՛չ, մենք չենք գնում, մեզ տանում են .

Տանո՛ւմ են, ադե՛ջան, տանո՛ւմ են . . .
Ինձ քեզանից հանում են . . .

Ա՛յս է իրականությունը: Իրականություն է և այն, որ այս երգը սալդատական ժողովրդական երգ է: Մարդկանց այն ժամանակ էլ տարել են հակառակ իրենց կամքի: Բայց ո՞ւր են տարել, ճակա՛տ, մարտադաշտ: Մարդիկ իմացել են, թե ուր են գնում և ինչի համար: Իսկ մե՞նք . . .

Իսկ մենք չգիտենք, թե ինչո՞ւ և ո՞ւր: Ո՞ւմ է հարկավոր այս ամենը:

Տանո՛ւմ են, ադե՛ջան, տանո՛ւմ են:

Յատուկ Պոէմ

Մենք գիտենք, թե մեզ ո՛ւր են տանում, ամեն դեպքում ո՛չ հարավ, ո՛չ էլ արևմուտք: Ինչո՞ւ են տանում, այդ էլ գիտենք, տանում են, որպեսզի մենք մեր գլխին չզգանք հայրենի երկինքը և մեր ոտների տակ չզգանք հայրենի հողը: Տանում են, որպեսզի մենք մեզ պատժված զգանք, խեղճացա՛ծ, ոչնչացա՛ծ .

Տանո՛ւմ են, ադե՛ ջան . . .

Ու մենք գիտենք, ա՛խ, մենք շատ լավ գիտենք, թե ում է հարկավոր այս ամենը . . . Բայց ավելի լավ է այդ մասին չմատածել . որովհետև, միևնույն է, մենք այդ մասին չենք խոսել ու չենք խոսի: Այս ամեն մեկը գիտե, գիտե և այն, որ դիմացինը գիտե, բայց այս մասին մենք չե՛նք խոսում, չե՛նք խոսում:

Տանում են . . .

. . . Օրեր են անցնում . գուցե տարիներ ու դարե՞ր: Մեր՝ քառասունհա դատապարտության միջին տարիների գումարը մենք չորս դար հաշվեցինք: Մի բան հաստատապես կարելի է պնդել, որ չորս դար չի անցել: Գնացքը վաղուց է կանգնած: Մենք այլևս չենք սպասում, թե երբ պիտի շարժվի: Ե՛րբ կուզի՝ թող շարժվի: Կարող է անգամ երբեք չշարժվել: Մենք ժամանակի տերը չենք, ժամանակն է մեր տերը, մենք մեր տերը չենք, մեր տերը սատանան գիտե թե ո՛վ է . մի բան որոշ է, որ մենք անտեր չենք: Եթե անտեր լինեինք, կգնայինք ուր որ խելքներս փչեր: Պարզվում է, որ անտերությունը ոչ միայն վատ բան չէ, այլև շա՛տ-շա՛տ պատվական բան է: Շա՛տ:

Հարևան կուպեների քառակուսի անցքերը բացվում ու փակվում են: Ինչ-որ հրամանի հոտ է գալիս: Այո՛, այո՛: Ահա բացվեց մեր դռան քառակուսին: Հրամանը պարզ էր .

— Իրերը հավաքե՛լ:

Այնուհետև մեկ-մեկ դատարկվում են կուպեները: Հերթը հասնում է մեզ: Մենք գրկում կամ շալակում ենք մեր իրերը, մեկ-մեկ իջնում ենք վագոնից և ոտք դնում մայր հողին: Առաջին գծից մենք բավական հեռու ենք: Բայց կայարանի ճակատին կարդում ենք՝ Վոլոգդա . . . այստեղ կարևորը վերջին վանկն է, —

դա՛: Դա-դա՛ . Վոլոգդա՛: Փորձում եմ հիշել, թե ինչ գիտեմ այս քաղաքի մասին: Ամեն դեպքում մենք գտնվում ենք Մոսկվայից էլ հյուսիս: Այնուհետև հիշում եմ, որ Վոլոգդայի անունը կապված է . . . այո՛, այո՛, Վոլոգդան նշանավոր է իր յուղ ու պանրով, ինչպես մեր Դարալագյազը: Ահա թե ինչու մեզ բերին այստեղ և հատկապես այստեղ: Ինչպե՞ս կարողացել են ճիշտ գուշակել, որ մենք ձանձրացել ենք Դարալագյազի յուղ ու պանրից և բերին մեզ այստեղ, որ Վոլոգդայի յուղն ու պանիրն անուշ անենք . . . Ի՜նչ հոգատարություն, ի՜նչ հո՛ւմ . . . հո՛ւմ . . .

Այստե՛ղ էլ մեզ դիմավորեցիմ մեծ վայելչությամբ, պահնորդներով և շներով: Նրանք շրջապատեցին մեզ և մի քանի անգամ հաշվեցին հեռվից ու մոտից: Հետո մեզ մեր իրերով հրամայեցին բարձրանալ ապրանքատարները: Այստեղ մեզ չծածկեցին բրեզենտով: Մենք շարժվեցինք: Բանուկ փողոցներով և մայթերով անցնող երկսեռ տեղացիները ոչ մի ուշադրություն չդարձրին մեզ վրա: Պատերին թարմ աֆիշներ՝ խաղում են «Թագավորը զվարճանում է»: Ինչո՞ւ չէ, էլ ի՞նչ թագավոր է, որ չզվարճանա: Աշնանային անձրևը քաղաքին տվել է տխուր, հոգնած տեսք: Ուրիշ պայմաններում այս անձրևը կարող էր մինչև անգամ բանաստեղծական համարվել . . .

Բանտը գտնվում էր քաղաքի արևմտյան ծայրամասում: Մեզ իջեցրին, նորից հաշվեցին և առաջնորդեցին մի բավականին ընդարձակ սենյակ, ուր պատերի երկայնքով դրված էին երկար նստարաններ: Այստեղ հրամայվեց մեզ մերկանալ մինչև վերջ: Այս կարգադրությունը մենք ընդունեցինք ակնհայտ տարակուսանքով: Ի՞նչ են ուզում անել մեզ հետ: Այնուհետև պահնորդները վերցրին մեր անկողիններն ու շորերը, փաթաթեցին և առանց գրելու մեր անունները, դիզեցին մի անկյունում: Այս էլ թվաց մեզ կասկածելի: Այստեղ կանգնել էին նաև չորս հրացանավոր պահակներ, որոնք ոչ մի բանով մեր աչքերը չէին շոյում:

Հետո՞: Հետո այն, որ ներս մտավ զինվորական շորերը հագիվ ծածկող բժշկական խալաթով բարձրահասակ մի անձնավորություն՝ բարձրաստիճան մի զինվորականի հետ: Այս էլ լավ նշան չէր: Մեզ հայտնի էր, որ նման մութ գործերին ներկա է լինում նաև բժիշկը, որը նույնպես ստորագրում է կատարման

ակտը: Բժշկական ստուգումը ծիծաղելի լինելու չափ ձևական էր: Մինչև վերջ նա ոչ մի բառ չարտասանեց: Բժիշկը ցից-ցից բեղեր ուներ և հալչող, կապույտ աչքեր: Նա մի քանի անգամ միայն կոկորդը մաքրեց, — քղը՛-քղը՛: — Նրանից փչող օղու հոտն ավելի ծանրացրեց մթնոլորտը:

Այդ էլ վերջացավ:

Այնուհետև բացվեցին աջակողմյան երկու դռները, և նշաններով մեզ հասկացրին, որ պետք է ներս մտնել: Թողնում էր այն տպավորությունը, որ մենք ընկել ենք համրերի աշխարհը: Ներս մտանք: Այստեղ հատակը ցեմենտից էր: Ուրիշ ոչ մի բան մենք չկարողացանք նկատել: Բայց ներքին վախով նկատեցինք և այն, որ մեր հետևից ներս մտան նաև չորս ավտոմատավորները: Այս արդեն հանաք չէ: Նրանք կանգնեցին մեզնից պատշաճ հեռավորության վրա, կողք-կողքի: Մենք՝ ադամամերկ՝ սպասում էինք դեպքերի հետագա զարգացմանը: Դեպքերի զարգացումը հանկարծ, անսպասելի կերպով ստացավ աղմկալի բնույթ: Սկզբում մենք չհասկացանք, թե ի՛նչ է կատարվում:

. . . . . .

— Հայդո՛ւկ, դու քնա՞ծ ես:

Աշոտ դային է: Ես լռում եմ, այսինքն ուզում եմ ասել՝ այո՛, ես քնած եմ: Բայց նա չի հուսահատվում:

— Ինչո՞ւ կալանավորներին չի թույլատրվում ժամացույց պահել:

— Որպեսզի չկարողանան ժամադրություն նշանակել, — պատասխանում եմ ես:

— Երևի՛, երևի, — պատասխանում է նա: Հետո անդրադառնում է: — Ժամադրություն՝ ո՞ւմ հետ . . .

— Ամեն կալանավոր ունի իր սիրուհին, — ասում եմ ես, և զարմանալի կերպով բոլոր կալանավորների սիրուհիները մի անուն ունեն:

Յատուկ Պոէմ

— Զարմանալի բան, — նկատում է Աշոտ դային և ուզում է երևի զարմանալ, բայց ես զգում եմ, որ նրա մտքերը հեռու են, — և ինչպե՞ս են կոչվում նրանք, — այնուամենայնիվ հարցնում է նա:

— Ազատությո՛ւն, — ասում եմ ես մեծ հանդիսավորությամբ:

— Տեղը բերիր, — երևի ժպտում է նա խավարում, — բայց գիշերվա համար շատ է դժվարամարս: Ավելի լավ է քնիր: Վաղը . . .

— Վաղը, այո՛, վաղը, — հաստատում եմ ես և աչքերս փակում:

. . . Չորս կողմից լսվեց խշշոց, թշշոց, և տաք գոլոշին ասես կտրեց մեզ ցեմենտե հատակից, և մենք, մերկ ու մազակալած, միայն վախ ներշնչող հրեշտակների նման լողացանք ցեմենտի ամպերում: Քիչ հեռու կարելի էր նկատել, որ մեր ժողովրդական կոմիսարը փնչում է և երկու ձեռներով եռանդով շփում սեփական գլուխը: Մշուշից դուրս լողաց ճարտարապետներից մեկը և օգտվելով աղմուկից, ականջիս շշնջաց: — Հիմա կսկսեն . . . — Ի՞նչը, — հարցնում եմ ես: — Գնդակահարել, — պատասխանում է նա: — Իսկ ինչո՞ւ բաղնիքում, — գրեթե բարկանում եմ ես: — Կրակոցները խլացնելու, արյան հետքերը սրբելու համար, — բացատրում է նա արագ-արագ, ասես վախենալով, որ ժամանակ չի մնացել իր մտքերը մինչև վերջ բացատրելու: Հետո մենք հայտնվում ենք մի ցնցուղի տակ և վերից թոփվող ախորժելի ջերմաստիճանով ջուրը կյանքի է կոչում մեր հոգնած ու տառապած մարմինները: Ցնցուղները չեն ենթարկվում մեզ, և կարիք էլ չկար, որ ենթարկվեն, նորմալ էր և չափը, և ջերմությունը: Մշուշի միջից մի քանի անգամ լսվեց հրացանավորների «սը՛ս-սը՛ս»-ը: Այդ նշանակում էր, որ մենք լողանալիս փնչփնչում ենք, մի բան, որ երևի չի կարելի:

Կասկածից դուրս էր, որ համառ հետևողականությամբ մեզ հետևում էր համեմատականության թեորիան, որը կապ չուներ Ալբերտ Էյնշտեյնի հետ, ոչ, այս տեսությունը լուսահոգի կըրխ-դահիրմանցի Սերոբին էր պատկանում: Հիմա մենք երջանիկ ենք, որ Վոլոգդայի բանտային բաղնիքում մեզ չգնդակահարեցին, և մենք լողանում ենք զինված պահակների հսկողության տակ:

Յատուկ Պոէմ

Ու հանկարծ, ինչպես միանգամից և անսպասելի սկսվեց աղմուկը, միանգամից էլ կտրվեց: Այս անգամ մենք մեզ զգացինք այն անհարմար դրության մեջ, ինչպես զգում են մեծ ոգևորությամբ պարողները, երբ հանկարծ նվագախումբը լռում է: Այս անգամ բացվեցին ձախակողմյան դռները, և նույն համր նշաններով հրամայեցին մեզ դուրս գալ: Մենք մտանք մի՝ կարելի է ասել՝ ընդարձակ սենյակ կամ փոքր մի սրահ: Երկար նստարաններին, պատշաճ հեռավորության վրա, դրված էին շորերի գորշ կապոցներ: Ցուրտը երևի մեզ օգնեց, որ մենք արագ կողմնորոշվենք: Ամեն մեկս տեր կանգնեցինք մի կապոցի:

Առաջին տպավորությունը բավականաչափ աննպաստ էր, եթե չասենք՝ քստմնելի: Սպիտակեղենը կոշտ քաթանից էր և շատ էր հեռու սպիտակեղեն լինելուց: (Ի՞նչ օճառով էր լվացված, ծանր հոտ ուներ): Գորշագույն բլուզի երեք կոճակներից մեկը փայտից էր: Բամբակած շալվարն ու պիջակը մեծ ու փոքր էին, ականջավոր գլխարկը կույր էր հոտում: Բուշլատը քաշում էր երևի մեկ փութ: Ամենասարսափելին կոշիկներն էին, դրանք ոչ թե կոշիկներ էին, այլ ծանր սանդալներ: Նրանցից ամեն մեկում երեք ոտք կարող էր տեղավորվել ապահովաբար:

Երբ վերջացավ դժվար զգեստավորումը, մենք վերջապես բարձրացրինք մեր գլուխը և նայեցինք իրար: Հիմնականում կարելի էր երկու մասի բաժանել մեզ՝ ծիծաղելիներ և ողբերգականներ: Ես, կարծեմ, և՛ մեկն էի, և՛ մյուսը:

Հետո զնգացին ինչ-որ փականքներ ու կողպեքներ, ինչ-որ դռներ փակվեցին ու բացվեցին, և մենք մուտք գործեցինք պաշտոնական բանտը:

Չորսհարկանի մի մռայլ շենք էր դա, կառուցված ծանր, ճնշող ճարտարապետական ոճով: Ամեն մի հարկն ուներ իր երկաթե դուռը, որին հսկում էին մի զինված և մի անզեն պահակ: Դեպի չորրորդ հարկը ձգվող քարե աստիճանների հարթակների վրա բացվում, ավելի շուտ փակվում էին հսկայական լուսամուտներ, որոնցից ոչինչ չէր կարելի տեսնել, որովհետև ապակիները գույնզգույն էին և բաժանված հարյուրավոր քառակուսիների և եռանկյունիների: Ինչ-որ միստիկական, խորհրդավոր, անհասկանալի բան ուներ այս բանտը, որը հետո հասկանալի դարձավ: Այո՛, հետո՛: Մենք քայլում էինք մեկ-մեկ աչք-ծոծրակ, այդպես բարձրացանք քարե, խուլ աստիճաններն ու երբ

հասանք չորրորդ հարկը, թեքվեցինք աջ: Մեր երթը ձախից և աջից հսկում էին երկու հերթապահներ: Նրանք քայլում էին մեզ հետ և մի քիչ կռացած, չափ էին տալիս մեր քայլվածքին, ամեն քայլի հետ կրկնելով՝ «սրս-սրս-սրս . . .»: Այսպես հետևում է պարի ուսուցիչը նոր ընդունված աշակերտի առաջին քայլերին: Կոշիկները ծանր էին, չէին ենթարկվում մեզ, մենք աշխատում էինք քայլել անձայն, և դա միշտ չէ, որ մեզ հաջողվում է: — Սրս . . . սրս . . .

Միջանցքը լայն է . միջանցքը լուսավորվում է էլեկտրական աղոտ լույսով: Առջևից քայլում է Երևանի կոմիտեի քարտուղարը, հետո ճարտարապետներից մեկը, երրորդը ես եմ: Ովքե՞ր են ինձնից հետո, չգիտեմ, կարևոր էլ չէ: Երկու կողմերում երկաթե փակ դռներ կան, ոմանք մոտ-մոտ, ոմանք իրարից հեռու: Մեծ ու փոքր կամերաներ են: Իրար մոտ գտնվող դռների վրա մեկից ավելի ծանր կողպեքներ կան: Մեկուսարաններ են երևի: Դռներից մեկի մոտ առաջնորդը կանգնում է: Մենք էլ: Նա սկսում է դռնբացեքի արարողությունը: Ես մի աչքով հետ եմ նայում: Ինձնից հետո միայն վեց հոգի կան: Մնացյալները . . . մնացյալներին կուլ են տվել առաջին, երկրորդ և երրորդ հարկերի կատակոբները:

Դուռը բացվում է, և մենք ներս ենք մտնում:

Մենք հիմա մենք չենք, մենք համարակալված, բայց այսպես թե այնպես կենդանի միավորներ ենք: Ես «222»-ն եմ, օրինակի համար: Ինչպես էլ գտան իսկական թիվս՝ 222, ոչ ավել, ոչ պակաս . . .

Որովհետև եթե մեկով ավելի լիներ՝ կարող էր ստացվել Երևանի կոմիտեի քարտուղար, իսկ եթե պակաս՝ ճարտարապետ . . . 222, ահա՛, ահա ես, ոչ ավելի և ոչ պակաս:

Ու եթե ես փախչեմ, այդպես էլ կասեն՝ 222-ը փախավ, ու եթե իմ և բանտային բժշկի հարաբերությունները լավանան, նա մի գեղեցիկ օր կապացուցի, որ համր չէ: Կխփի ուսիս և կասի՝ «222, քեֆդ ո՞նց է»:

Ու եթե մայրս ինձ նամակ գրի, պիտի գրի . «Որդյակ իմ 222, ստացա վերջին նամակդ և կարդալով շատ . . .»

Յատուկ Պոէմ

Ու եթե ես միօրինակ ու տաղտկալի կյանքս քիչ թե շատ բազմազան դարձնելու բարի նպատակով վերցնեմ ու մեռնեմ, չորրորդ հարկի պատասխանատու հերթապահն այդպես էլ պիտի զեկուցի բանտապետին . «222-ը մեռավ . . . »:

Խե՛ղճ 222:

Թվաբանական խնդիրն ավելի քան պարզ էր . կամերայում նստած էին 6 կալանավոր: Դուռը բացվեց, և ներս մտան 9 կալանավորներ: Քանի՞ Կալանավորներ էին ապրում կամերայում: Պատասխան — 15:

Մենք հիմա գիտենք, որ գտնվում ենք Վոլոգդայի քաղաքական մեկուսարանում: Մեկուսարանի շենքը ժամանակին եղել է վանական սուրբ հայրերի կացարանը: Այո, աստեղ, այս պատերից ներս ապրել ու ճգնել են աշխարհից խռոված մարդիկ: Նրանք կամավոր կերպով չարչարել են իրենց մարմինը, իսկ հոգին նվիրել խստասիրտ ու դժվարահաճ աստծուն:

Մեծ տարբերություն չկա այս մռայլ շենքի նախկին ու ներկա բնակիչների միջև: Աշխարհից խռոված՝ մենք էլ ենք ճգնում, մեր մարմինն էլ է չարչարված, իսկ մեր հոգիները՝ զոհաբերված խստասիրտ ու դժվարահաճ աստծուն: Աստվածների մեջ մի փոքր տարբերություն կա: Նրանց աստվածը զառամած, ալեհեր բեղ-մորուսով է, մերը՝ մաքուր սափրված, ալեխառն բեղերով: Այս է եղածը: Մի աննշան տարբերություն էլ կա՝ մինչ այս շենքի նախկին բնակիչները իրենց ձեռքով էին փակել դուռն իրենց վրա, ապա նրա նոր բնակիչներն իրենց կամքից ու ցանկությունից անկախ, շա՛տ, շա՛տ, շա՛տ հարգելի պատճառով նստած են փակ դռներից ներս:

Այս չէ՞ եղածը:

Այստեղ չեն խոսում, իսկ եթե խոսում են, ապա խոսում են շշուկով: Գոյություն ունեցող դրակոնական կարգերից շեղվողին սպառնում էր 5 — 10 — 15 օրյա տքնություն ստորերկրյա պատժարանում: Հինգ օրվա դատապարտվածները կամերա են վերադառնում այլափոխված ու կիսամեռ վիճակում, տասը օրականներին փոխադրում են այնտեղից փակ հիվանդանոց, իսկ տասնհինգ օրականներին՝ մո՛րգ: Վոլոգդայի սուրբ հայրերի մենաստանում կարծեմ այս էլ

չի եղել:

Այստեղ մեզնից առաջ հաստատված վեց կալանավորներից ամենահետաքրքիր անձնավորությունը, իհարկե, Սերյոժա Բենեդիկտովն է: Սա եղել է Լենինգրադի կոմերիտական շրջկոմի քարտուղարներից մեկը և իր ասելով՝ տեղյակ է քաղաքական ներքին բոլոր անցուդարձերին: Նա երեք անգամ ամուսնացել է, բռնվել է չորրորդ անգամ ամուսնանալու նախորյակին և խորապես համոզված է, որ ինքը զոհ է իր նախկին կանանց սադրանքներին: Գեղեցկադեմ է Սերյոժան, երիտասարդ, մի քիչ թեթևաբարո և կարելի է ասել՝ պարծենկոտ: Երբ մենք շշուկով նրան ասացինք, որ ահա՛ այն մարդը Երևանի կոմիտեի քարտուղար էր, կարծում էինք, որ նրա մեջ կարթնացնենք կոմերիտական հարգանքի զգացմունք դեպի իր ավագ, կուսակցական ընկերը: Իսկի էլ չէ: Նա անտարբեր մի հայացք նետեց մեր քարտուղարի վրա և փընչաց . — Շա՛տ եմ տեսել . . .

Ռոման Բելուգովը մոտ յոթանասուն տարեկան մի ծերուկ էր: Մանր դիմագծերով և ավելի մանր աչքերով այս մարդը կարող էր անշարժ նստել ժամերով կամ ձմեռը ժամերով անշարժ կպչել վառարանին, մնալ: Ոչ մի կերպ հնարավոր չեղավ պարզելու, թե ի՞նչ մեղադրանքով է նստած այս ահավոր հանցագործը: Մեզնից առաջ նա պատմել է, որ ինքը ձկնորս է . մի անգամ ձուկ որսալիս նա խմել է ու քնել է՝ թողնելով մակույկը բախտի քմահաճույքին: Բարձրացել է ուժեղ քամի և նրան քշել դեպի ծովի բացերը: Երբ ուշքի է եկել, նա իրեն գտել է նավահանգստային քաղաքներից մեկի կենտրոնական բանտում: Նրան մեղադրել են Սկանդինավիա փախչելու փորձ կատարելու մեջ:

Մի ուրիշին նա պատմել է, որ ինքն ունեցել է տնային հազվագյուտ ակվարիում՝ հազվագյուտ ձկների տեսակներով, որ իր ողջ կյանքում նա սնվել է սեփական ակվարիումի համեղ ձկներով և որ իրեն բռնեցին սուտ մեղադրանքով, որ տիրանան իր արժեքավոր ակվարիումին: Եվ, վերջապես, մի ուրիշ անգամ պատմել է, որ իր փեսան ձկնարդյունաբերության ժողկոմատի պատասխանատու աշխատող է և որ նա կենտրոնական պահեստից դուրս գրեց մեկ թե երկու տոննա ձկնկիթ մասնավոր շուկայում կրկնակի գումարներով ծախելու համար: Իր ասելով՝ նա օրգաններին իմացրել է այս հակապետական գործի մասին և ահա՝ շնորհակալության փոխարեն իրեն նստեցրին:

Այս և նրա պատմած բոլոր հակասական պատմությունների մեջ մի բան ակներև էր . նրա «գործից» ձկան հոտ էր գալիս: Ու մի անգամ, երբ ես և նա գտնվում էինք վառարանի մոտ և փորձում էինք տաքացնել մեր մարմնի երկու երեսները, ես շատ ցածր ձայնով հարցրի .

— Ինչո՞ւ քեզ նստեցրին խե՛ղճ մարդ . . .

— Ձկան պահածոնե՛րը, անիծվա՛ծ ձկան պահածոները . . .

Խնդիրը լուծեց կալանավոր Արխիպովը, որը եղել է ուսուցիչ, ձերբակալվել որպես մենշևիկ և այստեղ բերվել Ռոման Բելուգովի հետ: Նա ցուցամատը երկու անգամ խփեց ճակատին և ասաց .

— Մի՞թե չեք նկատում, որ նա . . . էն-իքը . . .

Ուզում էր ասել ցնդել է:

Առավոտյան և երեկոյան մեզ տանում են զուգարան: Մարգարե չպետք է լինել գուշակելու համար, որ բանտային վարչությունը որոշ ջանքեր չի խնայել սուրբ հայրերի այս մենաստանը վերակառուցելու համար: Նույն բանտային վարչությունն, ըստ երևույթին, առանձին ուշադրության է արժանացրել զուգարանին: Հիրավի, ուշադրության արժանի էր այս կառույցը: Զուգարանն ուներ միայն երեք կետ, բայց կարող էր սպասարկել տասներկու հոգու միանգամից, շնորհիվ իր հնարագետ և միաժամանակ անպատվաբեր ճարտարապետություն: Սուրբ հայրերը հազիվ թե համաձայնվեին օգտվել այդ հարմարանքից, անգա՛մ եթե նրա հղացումն աստվածային ծագում ունենար: Յուրաքանչյուր անցից, ինչպես ասվեց, օգտվում էր միանգամից չորս կալանավոր և նստում էր այնպես, որ նրանցից մեկը նայում էր դեպի արևելք, մյուսը՝ արևմուտք, երրորդը հյուսիս, իսկ չորրորդը՝ դեպի հարավային կողմն աշխարհի: Զուգարանի մուտքի մոտ հսկող հերթապահ պահնորդներն ամեն մի կալանավորի առողջապահական կարիքների համար մի-մի կտոր եռանկյունի կտրված թերթի կտորներ էին տալիս: Եռանկյունի՝ որ կալանավորները չկարողանան կարդալ և չիմանան, թե ինչ է կատարվում դրսում: Այնուամենայնիվ, մենք այդ կտորներից իմացանք, որ Եժովի տեղը նշանակված է

Լավրենտի Բերիան, իսկ Մուստաֆա Քեմալը մահացել է:

Բանտային շենքի մոայլ թարթիչների տակ տարածվում էին զբոսանքի քառակուսի տարածությունները, որոնք մեկ-մեկից անջատված էին տախտակե ցանկապատերով և փշալարերով: Ծանր կոշիկների խուլ դոփյուններից միայն կարելի էր գուշակել, որ պատից այն կողմ նույնպես իրար ետևից քայլում են կալանավորներ: Քայլելիս պետք էր ձեռքերը պահել հետևում, չպետք էր նայել ոչ վեր, ոչ վար, ոչ աջ, ոչ ձախ, այլ ուղղակի դիմացը, առջևից քայլողի ծոծրակին: Բանտային լռության կարգ ու կանոնին չէին ենթարկվում շատախոս սարյակները: Նրանք բարձրացնում էին այնպիսի աղմուկ ու աղաղակ, որ հսկիչներն անհանգստացած նայում էին դեպի վեր:

Ձմեռը պատի վառարանները վառում էին միջանցքից: Ի՞նչ փայտ էին վառում, ես չգիտեմ, բայց վառելիքը պետք էր, որ առաջնակարգ լիներ: Վառվող փայտը ուրախ աղմուկով ճարճատում էր ու երգում աշխարհի ամենաքաղցր և հուզիչ մեղեդիները, և պատը կամաց-կամաց տաքանում էր: Մի ջերմ ալիք էր անցնում կամերայում և տաքացնում մեր մրսած ու կծկված հոգիները: Մենք նայում էինք իրար, լուռ ժպտում և շատ լավ հասկանում էինք իրար:

Իմ մեծագույն հաճույքներից մեկն էր՝ դիտել նեղ պատուհանի ապակիների հարափոփոխ սառցանկարները: Ինչե՜ր ասես չէի գտնում այնտեղ: Ահա լեյտենանտ Գլանն իր շան, Եզոպի հետ, ապա Էդվարդյան ծառի մոտ կանգնած ժպտալիս, ձկնորսական խրճիթի դռանը կանգնած է Եվան և տխուր նայում է անտառային արահետին: Գիքո՜րն է կանգնած խանութի դռանը, որսորդը կրակում է, իսկ միրհավը ծալել է վիրավոր թևը, մի նաիրյան աղջիկ թեքել է հեզաճկուն իրանը, ու հոգնած հնձվորներն արտից գյուղ են վերադառնում:

Վոլոգդայի սո՛ւրբ հայրերի մենաստան:

. . . Իմ աջակողմյան մահճակալը պատկանում է ճարտարապետներից մեկին, իսկ ձախինը Լենինականի պատասխանատու աշխատողներից մեկին: Վերջինիս ազգանունը աղրբեջանական է, ինքը՝ հայ: Ղարաբաղի կողմերից: Ե՛վ մեկը և՛ մյուսը երդվայր ագռավներ են, մաքուր հոռետեսներ: Ամեն առավոտ նրանք քնից զարթնում են ու մեկն աջից, մյուսը ձախից պատմում են իրենց

տեսած երազները: Նրանց բոլոր երազները մեկը մյուսից մռայլ են ու չարագուշակ:

— Երազումս երեք ատամներս ընկան ափիս մեջ, — շշնջում է դարաբաղցին:

— Լավ երազ չէ: — Բացատրում է ճարտարապետը: — Հարազատներիդ հետ մի դժբախտություն չպատահի՞ . . . Ես էլ տեսա՝ մինչև մեջքս թաղվել եմ ցեխում, — ավելացնում է նա:

— Նոր գործ կարող են բաց անել, զգույշ կաց, — խորհուրդ է տալիս դարաբաղցին:

Լավ երազներ են համարվում, երբ երազ տեսնողը ձի է նստում . ավանակ նստելը նույնպես համարվում է ազատվելու նման մի բան: Հակազդելու համար իմ հարևանների գեշ երազների վրա՝ ես շաբաթվա մեջ մի քանի անգամ ստիպված եմ լինում ձի կամ ավանակ նստել:

— Ավանակն ի՞նչ գույն ուներ, — հարցնում է դարաբաղցին:

Ես մտածում եմ, որ սև էշը դժվար թե բարի նշան համարվի և ինձ նետում եմ ապիտակ ավանակի կռնակին:

— Սպիտակ, — պատասխանում եմ ես:

— Սպիտակը պատանք է, — շշնջում է դարաբաղցին և հորանջում:

Երկու օր հետո ես փոխադրվում եմ սև էշի վրա:

— Սևը սուգի նշան է, — այս անգամ վայում է ճարտարապետը:

— Բայց երազում էշ կամ ձի նստելը լավ նշան է, — բողոքում եմ ես:

— Կապրենք, կտեսնենք, — զիջում է դարաբաղցին:

— Ինչ երազ ուզում ես՝ տես, մեզ վրա սև խաչ են քաշել, — մտքերի փոխանակությունն ամփոփում է ճարտարապետը:

Յատուկ Պոէմ

Հին կալանավոր Արխիպովը մի տարի եղել է Սիբիրի ճամբարներից մեկում: Նա շշուկով պատմում է ճամբարային կյանքի մասին:

— Եգիպտական ճորտերի մասին գաղափար ունե՞ք, — հարցնում է նա:

— Ունենք:

— Ուրիշ բան չեմ ուզում ասել, — ասում է նա և աչքերը փակում:

. . . Ես չգիտեմ, չգիտեմ ո՛չ եգիպտական ճորտերի, ո՛չ էլ Սիբիրի ճամբարների մասին: Բայց ես լավ գիտեմ Վոլոգդայի քաղաքային մեկուսարանը, որը նախկինում եղել է սուրբ հայրերի մենաստան: Գիտեմ և այն, որ այս պայմաններում երկաթե մարդն անգամ կարող է մաշվել և ծակծկվել: Միօրինակ սնունդը մեզ զրկել է ախորժակից, և մենք հյուծվում ենք օր-օրի, այո, օր-օրի՝ այս բառի բուն նշանակությամբ: Մեր լինդերը հիվանդ են, նրանք այնքա՜ն են թուլացել, որ անձամբ ես ունեմ այն տհաճ զգացողությունը, որ ատամներս կակղել են: Եթե բժիշկը ցանկանա, ես կարող եմ նրա ուզած ատամը դուրս քաշել իմ բերանից և դնել իր ափին: Իսկ բժիշկը ոչինչ չի ցանկանում ու մեզ անհայտ մնաց, նա ասո՞ւն է, թե խուլ ու համր: Նա լսում է մեր շշուկով արտասանված խոնարհ գանգատները, «քղը՛» է անում և հսկիչի հետ դուրս գալիս կամերայից, թողնելով իր ետևից այրված օղու երբեմն հաճելի թվացող բուրմունքը: Լավատես լինելու, դայլայլելու տեղ չի մնում հիրավի, թեկուզ ամեն գիշեր երեք երազ տես, ընտիր նժույգների և տոհմական ավանակների երամակներով: «222»-ը կորչում է, նա կանգնում է այնպես, որ պատին ընկնում է նրա գլխաստվերը: Նրա վիզը բարակել է և երկու կողմից երևում են բեղերի ցից-ցից վերջավորությունները: Նա հիշում է Կուկունյանի լուսանկարը, որը տեսել է ինչ-որ բարակ գրքույկի վարդագույն շապիկի վրա: Կասկած չկա, որ նա հիմա իր այս վիճակով նրան է նման:

Մենք դատապարտված ենք կորստյան նաև այն պատճառով, որ հյուծված ու քայքայված են մեր ներվերը: Միայն երևանյան հուլիսյան երեք գիշերները բավական էին, որպեսզի մենք ուղարկվեինք Սև ծովի ափերը երկարատև ու տևական հանգստի: Այդ տևական հանգիստը վայելում ենք մենք հիմա այս դարավոր, մի քիչ ձևափոխված վանքում, ուր տիրում են լռություն ու

Յատուկ Պոէմ

խաղաղություն: Սակայն այս լռության ու խաղաղության տակ խարտոցներ կան ու նուրբ, հազիվ տեսանելի սողոցներ, որոնք խարտում ու սողոցում են մեր ջղերն օր-օրի, ժամ-ժամի: Մենք գտնվում ենք օրվա քսանչորս ժամվա ընթացքում՝ քսանչորս ժամ հսկողության տակ: Մենք մեզ զգում ենք լուսարձակների ու խոշորացույցի տակ, ուր հաշվի են առնվում մեր ամեն մի քայլը, ամեն մի շարժումն ու դիմախաղը: Քուն մտնելիս անգամ մենք ազատ չենք, որովհետև առաստաղին կպած ցանցապատ լույսը վառվում է ցերեկ ու գիշեր, իսկ մենք, քնած թե արթուն, միևնույն է, պարտավոր ենք պառկել՝ երեսներս դեպի դուռը: Մեկ ժամվա ընթացքում մի քանի անգամ շրխկոցով բացվում է դռան քառակուսին, և այնտեղից հսկիչը նայում է և ստուգում՝ ոչ ոք չի՞ փախել կամ չի՞ մտածում փախչելու մասին: Բոլոր մեծ ու փոքր զանցանքները նշվում են կալանավորների թվերի առաջ, և մի գեղեցիկ օր առանց բացատրության ընկնում ես դաժան պատժարանը: Բելուգովի հետ, սակայն, այսպես չպատահեց: Նա մի հարվածով տիրացավ պատժարանին: Մենք ուզում ենք ասել երևի, որ պատժարանը մի հարվածով տիրացավ Բելուգովին և հինգ օրվա ընթացքում խախտեց նրա մտավոր վիճակը:

Այո, Բելուգովը կամերա մտավ հարաբերական այն առողջությամբ, ինչ հատուկ էր ամեն կալանավորի: Ամեն ինչ սկսեց կոշկակապերի բացակայությունից . նրա ոտներն այնքան փոքր էին, իսկ ոտնամաններն այնքան ծանր ու մեծ, որ զբոսանքի ժամանակ ձախ ոտնամանը թռավ ոտից, և նա հազիվ կարողացավ պահել իր հավասարակշռությունը: Այդ օրը Բելուգովի համարի դիմաց նշվեց նրա այս հանցանքը: Երկրորդ օրը հսկիչները նկատեցին, որ կալանավոր Բելուգովն իր կոշիկներից մեկը կապել է մի անցքից, մյուսը՝ կարճ թելով: Նրան հրամայվեց «բացատրական թուղթ» գրել՝ որտեղի՞ց է ձեռք բերել «պարանը»: Ծերուկը գրեց, որ նա պարանով չէր կապել իր ոտնամանը, այդ կարճ թելը նա կտրել էր կամերայի ցախավելի կապից . . . — Պետական գույքի փչացում, վնասարարություն, — ահա բանտային վարչության եզրակացությունը: Բանտի վարչությունն իրար անցավ: Բելուգովը մեղադրվեց նաև մութ նպատակների համար պարան պահելու մեջ և հինգ օրվա վճռով իջեցվեց պատժախուցը:

Երբ հինգ օր հետո Բելուգովը ուռած ոտներով և ուռած այլանդակված դեմքով մի կերպ կամերա մտավ, բոլորը սարսռացին: Ինքը՝ Բելուգովն ուրախությունից

արտասվեց, որ կարողացավ նորից կամերա վերադառնալ, կամերա, որի մասին հինգ օր ու գիշեր երազել ու մտածել էր որպես կորուսյալ դրախտի մասին: Այստեղ էլ անվրեպ գործում էր հարաբերական երջանկության տեսությունը:

Բելուգովը քնեց քառասունութ ժամ: Երբ զարթնեց, նորից արտասվեց ուրախությունից և կարողացավ կից-կտուր շշուկով պատմել պատժարանի հմայքների մասին: Գետնափոր է այդ պատժարան կոչված «ցեմենտե պարկը»: Այնտեղ դրված է մի սեղան, սեղանի վրա՝ դագաղաձև մի հարմարանք, ուր պառկեցնում են մեղանչողին՝ երեսը դեպի դուռը: Շարժվելու ոչ մի հնարավորություն: Բնական կարիքները հոգալ՝ ինչպես երեխան է հոգում: Ցուրտը թափանցում է ոսկորներից ներս: Գիշեր-ցերեկ, երեք րոպեն մի անգամ, բացվում է դռան քառակուսին ու փակվում: Այս այն նպատակով, որ պատժվողը չկարողանա քնել: Այս արվում է բացառապես մարդասիրական նպատակով: Որովհետև եթե պատժվողը քնի, կարող է այլևս չզարթնել: Կսառչի և վերջ: Հո՛ւմ . . . հո՛ւմ . . . հումանի՛զմ: Բելուգովը կամերայում միայն իմացավ, որ հինգ օր է, ինչ բացակայում է կամերայից: Նա կորցրել էր հաշիվը: Նախքան այստեղ բերելը նրան բաղնիք էին տարել և փոխել էին սպիտակեղենը: Անցել էին օրեր, և Բելուգովը կամաց-կամաց ֆիզիկապես կարգի էր եկել, բայց հոգեպես հիվանդացել էր: Այո, հոգեկան հիվանդ էր Բելուգովը, նա, ըստ երևույթին, պատկանում էր հանդարտաբարո հոգեկան հիվանդների դասին: Երբ ձկնապուր էին տալիս, նա հրաժարվում էր ուտելուց, երեխայի նման խռոված՝ քաշվում էր մի անկյուն, հետո պատմում էր ձերբակալության պատմության մի նոր տարբերակ, ուր շարժիչ գլխավոր ուժը ձուկն էր . . . Մենք նայում էինք դժբախտ Բելուգովին, և մեզ հարաբերականորեն երջանիկ էինք զգում, որ դեռ չենք ընկել պատժարանը: Դա մեծ ուրախություն էր մեզ համար, բայց մեզ սպասում էին նոր ուրախություններ:

Մի գիշեր . . .

. . . Դժվարությամբ, կամաց-կամաց, ծանր մարտերով ձմեռն սկսեց նահանջել, և գարունը մտավ իր իրավունքների մեջ: Հիրավի, գարուն էր: Բնության մեջ տեղի ունեցավ ղեկավարության փոփոխություն: Համատարած սպիտակ դրոշի փոխարեն ամենուր փողփողացին կանաչ դրոշներ: Ի պատիվ գարնան

գալստյան մեր միջանցքի երկու ծայրերում գտնվող երկու պատուհանները բացվեցին, և ծառերի կանաչությունը խուժեց մեր աչքերից ներս ու լցրեց մեր սիրտն ու հոգին: Գարո՛ւն, գարո՛ւն, Վոլոգդայում: Տարվա այս եղանակին, երևի, սուրբ հայրերը պուրակ են իջել սունկ հավաքելու: Այսօր մեր ճաշի երեսին սունկի կտորներ էին լողում:

— Պահածոյի սունկ է, — ասաց ճարտարապետը:

— Այնուամենայնիվ սունկ է, — առարկեցի ես:

— Կարող է անգամ թունավոր լինել, — վայեց դարաբաղցի հայը:

— Մեզ դեռ ծաղիկներով պիտի դիմավորեն, — դայլայլեցի ես:

Այդ էլ անցավ:

Օդում ինչ-որ անհանգստություն էր զգացվում: Տարիների ընթացքում անստուգության մեջ սրված բնազդով մենք զգում էինք, որ շուրջն արտակարգ մի բան է կատարվում, և մենք գտնվում ենք կարևոր իրադարձությունների նախօրյակին: Մենք հիմա մեղրամոմից ձուլված շարժուն ու կենդանի էակներ ենք և ուզում ենք, որ լինելիքը շուտ լինի, այլապես մենք կհանգենք առաջին իսկ հովից:

Մի գիշեր . . .

Առաջին անսովոր երևույթն այն էր, որ մեր ականջին հասան հարևան կամերաների դռների բացվելու ու փակվելու ձայները: Աննախընթաց երևույթ՝ այն էլ գիշերով: Մենք սրում ենք մեր ականջները: Հիմա լռություն է, լռություն: Բայց ահա նորից դռներ են բացվում, դռներ են փակվում ու նորից լռություն: Գնալով ավելի մոտ ու որոշակի են լսվում կողպեքների բացուխուփը, և ահա . . .

Շխկաց, չխկաց և բացվեց մեր դուռը: Գիշերային հսկիչների հետ միասին մտավ մի ուրիշ զինվորական ևս: Սովորաբար նա ուղեկցում էր բժշկին:

Մենք բոլորս էլ մի մարդու նման նստեցինք:

Յատուկ Պոէմ

Նա ձեռքի թուղթը մոտեցրեց աչքին և կարդաց երեք թիվ:

Հագնվել:

Երեք հոգի, նրանցից մեկը Երևանի կոմիտեի քարտուղարն էր, հագնվեցին արագ և տագնապով:

Ո՞ւր են տանում: Ես հիշեցի այն գիշերը, երբ մեզնից թվում էր թե անդարձ տարան երկու ճարտարապետներին: Ներքին մի բնազդ մեզ ասում էր (գոնե ինձ...), որ այս անակնկալ հրավերը չարագուշակ աստառ չունի, որ մեր կյանքում պիտի փոխվի մի ինչ-որ բան, բայց ի՞նչ, ի՞նչ...

Գնացին, և դուռը փակվեց: Մենք մի րոպե նայեցինք իրար աչքերի՝ այնտեղ գտնելու համար մեզ տանջող հարցի պատասխանը:

Սկսվեց, տնքաց ղարաբաղցի հայը:

Ի՞նչը, հարցրի ես:

Պարզ չէ՞, ճարտարապետն էր:

Ես չուզեցի փորփրել: Նրանցից լավ խոսք լսելն անհնարին էր, իսկ ես... Իսկ 222-ը միայն լավը լսելու ցանկություն ունի, միայն լավը: Թող այդ լավը լինի խաբուսիկ, սուտ ու փուչ, միայն թե... 222-ը հոգնել է և պատրաստ է կես գեղեցիկ սուտին զոհաբերել տասը բնական, բանական և տրամաբանական ճշմարտություն: Թխի՛ գա: 222-ը լավ, շատ լավ գիտե գեղեցիկ ստի գինը:

Կար Ժամանակ, երբ այդ 222 կոչվածը շատ էր սենտիմենտալ և ուներ ոչ մի քննադատության չդիմացող նախապաշարումներ: Մի՞թե մեռնելուց հետո միևնույնը չէ, մեռար դու փափուկ անկողնում ստամոքսի խոցի՞ց, թե՞ ընկար պատերազմի դաշտում, բարձրացար կախաղա՞ն, թե՞ սիրային հողի վրա ինքնասպանություն գործեցիր: Ամենայն տեղ կյանքը մեկ չէ, ճիշտ է, բայց մա՛հը, մա՛հը... Չէ՞ որ ամենայն տեղ մահն էլ մեկ է: Իսկ մեռնելուց հետո մի՞թե միևնույնը չէ, թե ոսկորներդ որտեղ կհանգչեն, Զանզիբարո՞ւմ, Զանգեզուրո՞ւմ, թե Վոլոգդայում... թխի՛ դա:

Թխի՛ գա, 222, դու անցար կյանքի համալսարաններով, դարձար ակադեմիկոս և իմաստուն, ափսո՜ս որ այսպես էլ պիտի ոտներդ փռես, առանց կարենալու աղքատ մարդկությանը տալու քո հոգու անտակ, անծիր գանձերը: Երբ գտնվում էիր ազատ կյանքի, կենդանի փոխհարաբերությունների թոհ ու բոհում, դու սնանկ էիր ու տնանկ. դու ապրում էիր ծովում ու լողալ չգիտեիր, իսկ հիմա, երբ դու հմուտ լողորդ ես ու սուզակ, երբ կարող ես իջնել ծովի հատակը և այնտեղից մարգարիտներ հանել լույս աշխարհ ու նվիրել մարդկությանը, ընկել ես թակարդ ու որոգայթ ու փրկություն չկա քեզ համար, 22՛2:

222, դու կյանք մտար տաք գլխով ու տաք սրտով, դա բանի նման չէր, հետո քո սիրտը սառեց, բայց գլուխը մնաց տաք, այդ էլ մի դժբախտություն էր, իսկ հիմա, երբ դա կարող ես քո սառը գլխով և տաք սրտով հրաշքներ գործել, հավիտենական սառեցման են դատապարտված և՛ գլուխդ, և՛ սիրտդ, 22՛2:

Գնացին, խառնվեցին հազար տարվա մեռելներին, ասաց մեկը:

...

Դուռը բացվեց, ու ներս մտան: Ոչ մի բանով չէր կարելի ապացուցել, որ նրանք խառնվել են, այն էլ՝ հազար տարվա մեռելներին:

... Եկավ Մեսրոպը՝ խաշած սիսեռի, կաղամբի, մի խոսքով՝ խոհանոցի բուրմունքով բարձրացավ ու նետվեց անկողնուն:

Օ՛ֆ, հառաչեց նա հաճույքից, էսա քնուշ-հանգստանուշեն լավ բան չկա... ծո, քնա՞ծ եք...

... Եկավ Մեսրոպը, դա նշանակում է, որ կեսգիշեր է: Ես աչքերս բաց չարի, անգամ տեղիցս չշարժվեցի: Այս նշանակում է, որ քնած եմ: Եվ իսկապես քնած եմ: Ի՞նչ անենք, որ անցյալի պատկերները անհավասար արվեստով հանված կինոնկարի նման, երբեմն արագ, երբեմն դանդաղ ընթացքով անցնում են ուղեղիս կամ գուցե սրտիս ու հոգուս միջով: Ի՞նչ անենք: Մեսրոպը թոնթորաց, փնթփնթաց, մի քիչ շուռ ու մուռ եկավ ու քնեց: Ակնհայտ էր, որ նա այսօր մասլահաթի տրամադրություն ուներ:

... Նրանց մեղրամոմե դեմքերը լուսավորված էին ինչ-որ աղոտ, ամեն դեպքում խաղաղ ու կարելի է ասել գործնական լույսով: Երևանի կոմիտեի քարտուղարը միայն կամերային լսելի բարձր, այո, բարձր շշուկով ասաց.

Работать надо, այսինքն՝ պետք է աշխատել:

Ես այդպես էլ գիտեի, տեղից վեր թռավ ղարաբաղցի հայը, ճարտարապետը նայեց նրան ու ժպտաց:

Ճիշտ չես ասում...

Ավելի լավ է չվիճենք, բարկացավ ղարաբաղցին:

Այնուհետև աջից-ձախից հարցեր տեղացին, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս, ինչո՞վ:

Բանտապետի գրասենյակում երեք հոգի են եղել, որոնցից մեկը՝ զինվորական բժիշկ: Նրանք խոսել են սովորական մարդկային ձայնով և ոչ թե շշուկով: Будем работать? հարցրել է նրանցից մեկը: Բժիշկը թեթևակի նայել է լնդերը, բարձրացրել կոպերը, ստուգել է Սերյոժա Բենեդիկտովի լեզուն և չգիտես լրջությամբ, թե կատակով ասել: Լավ հանգստացել, կազդուրվել եք: Հիմա աշխատել է պետք... Ոչինչ, սրտապնդել է մյուսը, լագերում կարգի կգաք:

Մի խոսքով, շշնջում է Սերյոժան, բանտերը դատարկվում են: Կալանավորներին քշում են լագերներ:

Բանտերը չեն դատարկվի: Մեզ փոխարինողներ կգան, ասում է նախկին ուսուցիչ Արխիպովը, հին, ծանոթ պատմություն...

Բոլորս նայում ենք Արխիպովին: Նա շատ լավ է հասկանում, թե ինչ ենք մենք նորից և նորից ուզում իմանալ նրանից: Նա խուսափում է մեր հայացքից, բայց գիտենք, թե ինչ կարող է նա մեզ ասել ճամբարի մասին:

Եգիպտական ճորտերի մասին գաղափար ունե՞ք...

Ուրիշ ոչինչ չի կարող ասել, կարծես թե ամեն ինչ ասված չէ, կարծես թե պարզաբանումների կարիք կա: Իսկ Բենեդիկտովի կարծիքով՝ ճամբարը կես ազատություն է:

Դուք էլ հաշվեք, ասում է նա, եթե հաշվեք բոլոր փակ դռները, մենք նստած ենք յոթ փականքի տակ: Մի՞թե սա սարսափելի չէ: Այսինքն սա և՛ բնական է, և՛ բանական. մեր առաջնորդը մարդուն համարում է ամենաթանկ կապիտալը և դրա համար էլ յոթ կողպեքի տակ է պահում այդ գանձը... Իսկ ճամբարում...

Գիշերն անցավ անհանգիստ երազներով: Եգիպտական բուրգեր էինք կառուցում, իսկ սֆինքսի գլուխը ձկան վիթխարի գլուխ էր: Նստած բուրգերի ստորոտին՝ Բելուգովը ծիծաղում էր ամբողջ կոկորդով և պարծենում:

Սա աշխարհի ութերորդ հրաշալիքն է, որ կա, գործ՝ ճարտարապետ Իվան Իվանիչ Բելուգովի...

Ես նստած եմ երկարավիզ ուղտի երկու սապատների միջև, իսկ ուղտը մաքուր հայերենով ինձ ասում է.

222, քշի՛ր դեպի Նեղոս, ես սարսափելի ծարավ եմ:

Լսի՛ր, բարեկամ, ասում եմ ես, ես կալանավոր մարդ եմ, ինձ նոր փորձանքի մեջ մի գցի, ես չեմ կարող առանց հրամանի...

Դու գտնվում ես եգիպտական ճամբարում, ընդհատում է ինձ բարկացած ուղտը, իսկ ճամբարը կես ազատություն է:

Վոլոգդայի գարունը, որն առաջին օրերին երկչոտ էր ու տրտում Տատյանայի նման, հիմա բռնկվել է արյան, սերմի, սիրո կրակով, ու կամերայում շնչելու օդ չկա կարծես: Մենք կտրվել ենք ուտելուց, նայում ենք մեկ-մեկու դեմքին ու զգում, որ օր-օրի մաշվում ենք ձկնամարդու նման, որն ընկել է արևի տակ և որի վրա մոխիր են ցանել:

... Այսօր նորից վաղ առավոտից կամերաների դռները բացվում են ու փակվում, և միջանցքում արտակարգ շարժում կա: Բենեդիկտովի ասելով՝ թեյ ստանալիս նա

Յատուկ Պոէմ

նկատել է կանացի հոլանի թևեր:

Այո՛, պնդում էր նա, այսօր թեյ տվողներից մեկը կին էր, իսկ այս մեկչորրորդական ազատություն է: Իսկ երեկվա ա՞ղը... ե՞րբ էին կալանավորին այդպիսի՝ ձյունի նման սպիտակ աղ տվել...

Մենք, իհարկե, ժպտում ենք ներողամիտ ժպիտով նրա փաստարկումների վրա, բայց ներքուստ միանգամայն համաձայն ենք նրա հետ և ուզում ենք, որ նա կրկնի իր ասածները, ապացուցի նորից ու նորից, որ թեյ ստանալիս կանացի սպիտակ թևեր տեսնելն ու սպիտակ աղ ստանալն ստույգ ազատության նշաններ են:

Так, так...

... Ամեն ինչ կատարվեց սպասվածից ավելի շուտ և հասարակ կերպով: Դուռը բացին և գրեթե մարդկային ձայնով հրամայեցին.

Դո՛ւրս եկեք իրերով:

Մենք վերցնում ենք մեր սրբիչները, օրաբաժին հացի մնացորդը, ճաշամանն ու գդալը և մեկ-մեկ, երկու-երկու միջանցք ենք դուրս գալիս, մեկ-մեկ՝ ամուր դռփելով: Ոչ մի «սը՛ս-սը՛ս», ոչ մի նկատողություն: Մենք իջնում ենք համր ու քարե աստիճաններով և զգում ենք, որ այլևս չենք բարձրանա վեր: Մնաս բարո՛վ, Վոլոգդայի սուրբ հայրերի օթևան, շնորհակալությո՛ւն քո հյուրընկալ ճիրանների, քո աղ ու հացի համար: Գնում ենք, ո՞ւր, դեպի հարաբերական, համեմատական երջանկությո՞ւն, թե՞ գուցե երանի տալով հիշենք քեզ... Ամեն դեպքում գնում ենք, ուրեմն՝ բարի՛ հիշիր մեզ քո սրտում...

Բանտի ընդարձակ բակը ողողող արևի տակ տիրում է անսովոր եռուզեռ: Հարյուրավոր կալանավորներ խմբերով, այստեղ-այնտեղ հանում են բանտային շորերը և հագնում սեփականները: Շորերը պահված են կամերաների համարների տակ երևի: Հսկիչները մեզ առանձնացնում են մի անկյուն, բերում, թափում են մեր շորերը խառնիխուռն, և մենք սկսում ենք ջոկել-ջոկշկոտել: Դժվար է սպիտակեղենների գործը, դժվար է որոշել իմն ու քոնը. մենք լռելյայն որոշում ենք անցնել այդ մանրուքի վրայով և հագնվել՝ ինչպես հանդիպի: Այս

իրարանցումին անհաղորդ է մնում Բելուգովը: Նա նստած է մի երկար նստարանի ծայրին ու նայում է անթարթ աչքերով մի կետի: Հսկիչները փորձեցին նրան հասկացնել, որ պետք է հագնվել: Ի պատասխան՝ նա մռմռում էր.

Կհասցնեմ: Ձկնորսության չեմ գնում...

Բենեդիկտովը հսկիչներից մեկի ականջին ինչ-որ բան ասաց, հսկիչը հսկիչին հաղորդեց իր լսածը, մատով ցույց տալով Բելուգովին, կարճ խորհրդակցությունից հետո նրանք մոտեցան Բելուգովին, ինչ-որ բաներ ասին, հետո առանց կոպտության և առանց ավելորդ քնքշության թևանցուկ արին նրան ու տարան:

Բժշկական քննության երևի:

Հագնվելուց հետո ես ինձ իմ շորերում զգացի թեթև, բանաստեղծի ասածի պես՝ լուսամփոփի պես թափանցիկ, իսկ երբ դեն նետեցի բանտային ահավոր ոտնամաններն ու հագա իմ տնային կոշիկները, մի ուրիշ բանաստեղծի ասածի պես՝ կարծես արև իջավ իմ ուսերին, ոչ, կարծես թևեր բուսան իմ ուսերին ու թվաց, որ ուր որ է՝ պահապանների, հսկիչների և զինված պահակների աչքերի առաջ վեր կճախրեմ, կանցնեմ բանտի պարիսպները և հսկիչ աշտարակին կանգնած զինված պահակի քթի տակով կսուրա՛մ դեպի ազատություն, պայմանով, որ նա փակի աչքերը և լինի այնքան բարի, որ չկրակի մազակալած, մեղրամոմի դեմքով ու կեռ կտուցով այս տարօրինակ թռչունի վրա, որ 222 էր կոչվում:

Մենք, նախկին երամի հայաստանյան կողմերից բերված թռչուններս, հեռվից հեռու իրար նկատում ենք, մոտենում նախ երկչոտ, ապա տեսնելով, որ մեզ վրա ուշադրություն դարձնող չկա՝ ավելի և ավելի համարձակ քայլերով: Հետաքրքիր էր նկատել, որ, այնուամենայնիվ, ագռավները դեռ շշուկով են խոսում, իսկ դեղձանիկները ճռվողում են անհամեմատ ավելի բարձր նոտաների վրա:

Այնուհետև ի՞նչ պատահեց: Մեզ հրամայվեց շարժվել մեր իրերով դեպի բանտի ելքի դարպասները: Ոմանք շալակեցին, ոմանք գրկեցին իրենց տնային իրերը, և մենք առաջ շարժվեցինք աշխատելով չխանգարել իրար: Ես մի անգամ էլ ետ

դարձա և նայեցի Վոլոգդայի սուրբ հայրերի չորս հարկանի մռայլ օթևանին, և իմ սիրտը լցվեց դառն անձկությամբ: Որքա՜ն ապրումներ ու տագնապներ թողինք մենք նրա պատերից ներս ու գնում ենք հիմա, ո՞ւր, չգիտենք, մի բան միայն պարզ է, որ այլևս չենք վերադառնա:

Ամեն ազգից բաղկացած մեր վիթխարի թափորը դուրս եկավ բանտի դարպասներից: Այստեղ կանգնած էին տասնյակ ապրանքատարներ, որոնք եկել էին խոնարհաբար մեզ ծառայելու: Մենք, Երևանից եկած կուկունյաններս, աշխատեցինք ամեն դեպքում միևնույն ավտոն գրավել, և դա մեզ մասամբ հաջողվեց: Ավելի հեռու... ավելի հեռու կանգնած էր ապրանքատարների մի հսկայական շարք, նոր բանտարկյալներով բեռնավոր, որոնք եկել էին մեզ փոխարինելու: Հին, ծանոթ պատմություն, կասեր Արխիպովը:

Չէ՛, չկար այն լարված մթնոլորտը, որով մեզ դիմավորեցին, երբ մենք նոր ժամանեցինք: Բանտի ծառայողները հանդարտ ու բանիմաց անում էին կարգադրություններ, որոնք չէին հակասում բանականությանը: Վերջապես հոնդացին մոտից ու հեռվից մեր ապրանքատարները, և մեքենայացված քարավանը շարժվեց դեպի արևելք:

Դեպի՛ արևելք, դեպի արևե՛լք:

Ավտոշարանը կանգնեց կայարանի շենքից հեռու: Մեր և կայարանի շենքի միջև բազում կառամատույցներ կային ու սլացքուն գծեր: Առաջապահ մեքենաները չէին երևում, ու չէին երևում վերջում ընթացողները: Այստեղ ցույց տրվեց մեզ պատշաճ ուշադրություն: Ընդունելությանը մասնակցում էին և շները, որոնք ավելի դիվանագիտական դիտորդների դերում մնացին: Երկաթգծի վրա կանգնել էր մի անծայրածիր ապրանքատար վագոնաշար: Սովորական ապրանքատարներից նրանք տարբերվում էին երկու փոքրիկ, բարձրադիր, երկաթե ճաղերով զարդարուն լուսամուտներով: Առաջին տասնյակ վագոնների մոտ երթևեկում էին զինված պահակներ: Երևում էր, որ այդ վագոններն արդեն բնակեցված էին:

Յատուկ Պոէմ

Ապրանքատար մեքենաներն աստիճանաբար թեթևացան, իսկ ապրանքատար վագոնները ծանրացան: Մեր վագոնի բնակիչների ճնշող տոկոսը կուկունյաններս էինք: Բենեդիկտովը մեզ ծանոթացրեց դեկաբրիստների դեմքերով իր լենինգրադցի ծանոթներին, անվանելով նրանց «Լենինգրադի ակտիվ»: Լենինգրադի ակտիվը սարսափելի հայհոյում էր, հայհոյում ինձ համար միանգամայն անծանոթ, պատկերազարդ հայհոյանքներով: Իմ այն հարցին, թե ո՞ւմ են նրանք հայհոյում, Բենեդիկտովը պատասխանեց.

Կոզմա Պրուտկովին...

Ու նայեց աչքերիս. ուզում էր ասել, երևի՝ ինչո՞ւ ես հարցնում, պարզ չէ՞ թե ում են հայհոյում... Ամեն դեպքում՝ ո՛չ Կոզմա Պրուտկովին:

Ապրանքատար վագոնները ներքուստ հարմարված էին այն նպատակին, որին, ըստ երևույթին, տարիներով նրանք ծառայել էին: Նրանց երկհարկանի տախտամածներով, ըստ երևույթին, հազա՛ր-հազարներ էին ճանապարհորդել, և նրանք հղկվել էին և մի տեսակ մշակվել: Պատի տախտակներին փորված էին զանազան անուններ և մակագրություններ. «Բեդնի շակալ», որը նշանակում էր «Խեղճ բորենի», «Միշկա-Մուրուշկա», «Կրեստոնոսեց», այսինքն՝ «Խաչակիր», «Կինժալ Ժորա»՝ «Խանչալ կամ դաշույն Ժորա», «Տամբովսկի կրոկոդիլ»... ու դեռ «Ինդուս-Պինդուս», «Էդվարդ Ջունգլի», «Բալնոյ Ֆերդինանտ», այսինքն՝ «Հիվանդ Ֆերդինանտ», «Բլեդնայա Մարուսյա», իսկ բլեդնայա նշանակում է գունատ. «Վերա Վարվարկա», որ կթարգմանվի «Բարբարոս Վերա», «Մանախ Ռոստովսկի»՝ «Ռոստովյան վանական», «Վաշա Նատաշա»՝ «Ձեր Նատաշան», «Տանյա Նեդոտրոգա»՝ «Անմատչելի Տանյա», «Վասկա Կաբակ», այսպես թարգմանած՝ «Վասկա Գինետուն»: Այստեղ կարելի էր ճարել և «Դմիտրի Յադ», այսինքն «Դմիտրի թույն» և «Կոլյա Ադ»՝ «Կոլյա Դժոխք» ու հանկարծ մարդկային այս խաժամուժում հայերեն ծուռտիկ, անվարժ, երկաթագիր տառեր. «Սոգյութլեցի Տիգրան» կարելի է կարդալ այնտեղ և մի րոպե բարձրանում է նահրյան անմար ոգին ու նայում է աչքերիդ տխուր հայացքով, Սոգյութլեցի մի Տիգրանի աչքերով ու կարծես հարցնում, չէի՞ր սպասում...

Ո՛չ, չէի սպասում:

Որտե՞ղ ես հիմա, Սոգյութլեցի Տիգրան, եթե մարդկության ծննդյան օրից մինչև հիմա մեռած իննսունվեց միլիարդ մարդիկ գերեզման ունենային, ամբողջ աշխարհը վերածված կլիներ մի անծայրածիր գերեզմանոցի... դրա համար էլ մարդկային պատմության մեջ ժողովուրդներ են ծնվել ու մահացել առանց մի գերեզման թողնելու: Որովհետև... Որովհետև մարդու նման գերեզմաններն ու գերեզմանոցները նույնպես մեռնում են անհուշ ու անհիշատակ. նրանց վրա շենքեր են շինում, նրանց միջով ջրանցքներ են վարում, գործարաններ են կյանքի կոչում... ի՜նչ մի մեծ բան, եթե մի Սոգյութլեցի Տիգրանից մնացած լինի ահա այս մակագրությունը և ուրիշ ոչինչ: Խելոք ես եղել դու ու եղել ես հեռատես, Սոգյութլեցի Տիգրան, դու փորել ես քո անունն այս զարհուրելի վագոնի տախտակներից մեկի վրա հայկազյան կեռիկ գրերով. ինքդ գուցե մահացել, բայց քո ոգին հառնել է ահա որպես գերված ու շղթայված նահրյան ոգի ու պիտի ապրես դու, Սոգյութլեցի՛ Տիգրան, քանի ապրում է մի ժողովուրդ այս հակասություններով և արտառոցություններով հարուստ հողագնդի վրա:

Այսպե՛ս է բանը:

Հետո ձիաքարշ բազմաթիվ սայլակներով ինչ-որ փակ տակառներ բերին ու տեղավորեցին հավելված վագոններում, պարկերով թխած հաց, էլի պարկեր, մի խոսքով հո՛ւմ... հո՛ւմ... հումանի՛զմ: Ճաշին բավականին առատությամբ բաժանեցին մանր, աղի ձուկ, որն ունեցավ խանդավառ ընդունելություն: Վաղուց մենք չէինք կերել նման սուր բան: Ուտելիս ես հիշեցի կալանավոր Բելուգովին, խե՛ղճ Բելուգով, տեսնես ուր ես հիմա: Ամեն մի վագոն երկու դույլ ոչ սառը ջուր ստացավ, որը մենք ուղարկեցինք մանր ձկների ետևից, որովհետև ինչպես կենդանի, այնպես էլ աղ դրած ձկները չեն կարող ապրել առանց ջրի: Առանց մեր խնդրանքի մեր մատակարարները բաց արին դուռը, վերցրին դատարկ դույլերը և վերադարձրին ջրով լեցուն, պատվիրելով միաժամանակ ջուրը խնայողությամբ գործածել, որովհետև, նրանց ասելով, մեզ ուղեկցում են սակավաթիվ մատակարարներ, իսկ հազարավոր կալանավորներին ջրով ապահովելու համար հարկավոր է մատակարարների ամբողջ բանակ: Ճամբարային գործերի հմուտ մասնագետ Արխիպովն ընտրվեց վագոնի կոլեկտիվի ավագ, որի առաջին գործն այն եղավ, որ ջրով լեցուն երկու դույլերն առավ իր հսկողության և քարտային սիստեմի տակ...

Տեղավորվեցինք ինչպես պատահեց, ոմանք վերև, ոմանք ներքև: Մեզ համար մեծ ուրախություն էր, որ իրավունք ունենք խոսելու բարձր ձայնով, մենք կարող ենք անգա՛մ երգել, եթե ուզենք, և ինչո՞ւ չերգել: Ու մոռացած ամեն տարաձայնություն, դարձած մի՛ հոգի, մի՛ սիրտ և մի՛ ձայն, ագռավներն ու դեղձանիկները երգում են երկու ուրիշ թռչունների սրտառուչ ու հնամենի նախրյան երգերը. «Ծիծեռնակ» և «Կռունկ»: Վագոնում լռում են բոլոր ազգությունները և կարծես հասկանում են ու զգում, թե ինչի մասին են երգում այն սև աչքերով, մեղրամոմե, կեռ քթերով ուրարտական թռռան թոռները...

Երեկոյան՝ նույնպես ձուկ: Բարձրացավ բավականության մի նոր ալիք, որը սակայն արագորեն իջավ, երբ ընթրիքից հետո ստացանք բոլորին ծառայող թիթեղե երեք բաժակներով այնքան ջուր, որ հազիվ կոկորդներս թրջեց:

Սկսեց կամաց-կամաց մթնել: Վաղուց, շատ վաղուց էր, ինչ խավար չէինք տեսել և ապրել էինք գիշեր-ցերեկ լուսավոր կյանքով: Հիմա խավարը թավշի նման շոյում է մեր հոգնած աչքերը: Մշուշվում են դեմքերն ու ամեն ինչ, ու մենք լցնում ենք խավարը՝ ինչով որ ցանկա մեր հոգին, ամեն ինչով՝ ինչ հաճելի է մեզ համար:

Լա՛վ, շատ լավ է լուծված այստեղ արտաքնոցի խնդիրը, որն այնքան արյուն է պղտորել տարիներ շարունակ կամերային փակ պայմաններում: Պարզապես բացված է երկաթով շրջափակված միջին պնակի մեծության կլոր մի անցք դեպի արտաքին աշխարհ և վերջ: Ի՜նչ հրաշքներ ասես չի գործում մարդկային հանճարը:

Գիշերվա մի ժամի հեռվից լսվում են ինչ-որ թխկթխկոցներ:

Սկսվեց, ասում է, Արխիպովը:

Ի՞նչը:

Ստուգումը, պատասխանում է Արխիպովը, ամենաջղայնացնող արարողությունը:

Ի՞նչ են ստուգում, ինչո՞ւ են ստուգում:

Այս հարցերի պատասխանը շատ չուշացավ: Պարզվեց, որ բոլոր կայարաններում և կանգառներում հատուկ մարդիկ կան, որոնք մուրճերն առած՝ ստուգում են վագոնների յուրաքանչյուր տախտակը: Այս արվում է կանխելու համար փախուստի փորձ կամ նախապատրաստություն: Այս արարողությունը կատարվում է գիշերները:

Թխկթխկոցներն ավելի և ավելի մոտենում են և ուժեղանում: Իսկ երբ գործը հասնում է քո վագոնին, մի ցանկություն միայն կարող ես դու ունենալ, և այդ ցանկությունն է՝ փակել ականջներդ ու փախչել:

Փակել ականջներդ դու, իհարկե, կարող ես, իսկ փախչե՞լ... Թվում է, թե մուրճի հարվածները իջնում են գլխիդ, սրտիդ, ուղղակի ներվերիդ ու դու ահա, ահա, պիտի ուշաթափվես, պառկես ու գուցե ժամանակավորապես, բայց մեռնես:

Մոտ տասը րոպե է տևում ներվերի այս ահավոր կտտանքը, որից հետո նրանք անցնում են հաջորդ վագոնի ստուգմանն ու դա կամաց-կամաց հարություն ես առնում:

Գիշերվա մի ժամի ես զգում եմ, որ գնում ենք: Խուլ աղմկում են անիվներն, ու վագոնն օրորվում է: Ինձ տանջում է ծարավը: Երազում պետհրատի դիմաց հոսող սառնորակ ծորակից ջուր եմ խմում, խմում եմ անվերջ ու անհագուրդ, խմում եմ ու չեմ հագենում: Իսկ հիմա գնում ենք ու, փա՛ռք աստծո, որ գնում ենք, ո՞ւր, այդ կարևոր չէ, կարևորն այն է, որ գնում ենք: «Դեպի աղբյո՛ւրը լույսի», կասեր բանաստեղծը: Մեզ համար հիմա, եթե անկեղծ խոսենք, լույսի աղբյուրն այնքան կարևոր չէ, որքան ջրի աղբյուրը...

Գնում ենք:

... Լույսի գորշավուն շերտեր և քուլաներ են լողում ճաղապատ երկու փոքրիկ պատուհաններից՝ վագոնից ներս: Այդ նշանակում է, որ լուսաբաց է: Մի տեղ գնացքը կանգնեց: Դրսում ոչ մի շարժում: Երևում է, որ կանգնած ենք խուլ, փոքրիկ մի կայանում և ոչ թե կայարանում: Կարծես հաստատելու համար իմ միտքը՝ ականջիս հասնում է կովի երկարատև, առողջ մի բառաչ: Իմ սիրտը

լցվում է տարօրինակ, անօրինակ մի հուզումով: Ես ուզում եմ, որ նորից կրկնվի այդ սրտառուչ, հոգեցունց, ընդամենը՝ կովի բառաչը, բայց չի կրկնվում, դրա փոխարեն ես լսում եմ աքաղաղի գործնական, զնգուն մի ծուղրուղու: Ես մտածում եմ այն մասին, որ այս խուլ կայանից ոչ հեռու մարդիկ են ապրում և կան խաղաղ տներ, որոնց տանիքների տակ կովեր են բառաչում և աքլորներ են ծուղրուղու կանչում: Ասես քթիս է հասնում այդ խաղաղ աշխատանքով և սիրով ապրող տների հաճելի, գաղջ բուրմունքը: Ուրեմն՝ կեցցե՛ կյանքը, կեցցե՛ ծուղրուղու կանչով լուսաբացն ազդարարող այն աքաղաղը: Ես կարող եմ ի պատիվ նրա արտասանել դեռ տատիցս սովորած իր պարզունակությամբ հանճարեղ մի բանաստեղծության չորս տողերը, ահա.

Աքլոր կատար տնկած է՛,
Վիզն ու գլուխ բարձրացուցած է՛,
Կարմիր բերան բացած է՛,
Կուկլի կուկու-կկանչե...

Վայելի՛ր:

Վայելի՛ր, բարեկամ, վայելի՛ր, երեք բանաստեղծներդ եթե տասը տարի նստեք և խելք խելքի տաք, այդպիսի բան չեք կարող հնարել:

Բացվեց վերջապես առավոտը: Հիմա մենք կանգնած ենք, ըստ երևույթին, ավելի կարևոր մի կայարանում: Մենք լսում ենք երթևեկող շոգեշարժերի և գնացքների աղմուկը: Հարևան վագոնների դռները բացվում են ու փակվում: Բացվում է և մեր վագոն-բանտի կամ բանտ-վագոնի դուռը: Հասարակ, զինվորական տարազով, կապույտ աչքերով երկու երիտասարդներ տախտակե մատուցարանը բարձրացնում են դեպի վեր. մատուցարանում մեր օրաբաժիններն են: Մենք ընդունում ենք, և ավագի հսկողությամբ ամեն մեկն ստանում է իր բաժին հացը: Մենք զգուշությամբ հարցնում ենք մեր ամենօրյա ապրուստի մասին: Առայժմ միայն հաց, իսկ ճաշին մանրածուկ, մենք այդ մանրածուկը կարող ենք միանգամից ուտել կամ բաժանել նախաճաշի, ճաշի և ընթրիքի վրա:

Գիշերվա ծարավն անցել է. ըստ երևույթին բոլորն էլ ինձ նման երազում այնքան ջուր են լցրել իրենց կոկորդն ի վար, որ զզվել են ջրից: Ավազը մի դույլ ջուրը պահում է աչքի լույսի պես: Ծարավը ծարավով է հագեցել: Այդպես էլ է պատահում:

... Դեպի արևելք, դեպի արևելք, մենք ընթանում ենք դեպի հեռավոր արևելք՝ Վլադիվոստոկի գծով: Գոնե այդպես է ասում ճամբարային գործերի հմուտ մասնագետ Արխիպովը:

Ճաշին ձուկ են բաժանում:

... Վերջին անգամ մենք դատարկ դույլը տալիս ենք մեզ ձուկ բաժանող երիտասարդին և խնդրում.

Ջո՛ւր: Ջո՛ւր:

Նա նայում է մեզ տխուր աչքերով, վերցնում է դույլը և ասում.

Մյուսն էլ տվեք:

Մենք տալիս ենք մյուսն էլ:

Նա նայում է աջ-ձախ ու գնում դեպի ձախ:

Հիմա մեր ականջին հասնում են աղաղակներ. այդ կալանավորներն են գոռում.

Ջո՛ւր: Ջո՛ւր...

Քիչ հետո երևում է երիտասարդը ջրով լեցուն երկու դույլերով:

Վերջին անգամ, ասում է նա:

... Այդ երեկ էր: Իսկ այսօր մենք մի դույլից քիչ պակաս հոգեպահուստ ջուր ունենք: Այնուամենայնիվ, երեկոյան կողմ, երբ մեծ կայարաններից մեկում

կանգնեց գնացքը, մենք դուռը ծեծեցինք համառ ու անընդհատ: Դուռը բացվեց, և երևաց մեզ սպասարկող երիտասարդը: Ավագը պարզեց դույլը:

Ջո՛ւր...

Երիտասարդը գլուխը թափ տվեց:

Հնարավոր չէ... Կան վագոններ, որոնք երեք օր է, ինչ ջուր չեն ստանում... Լսո՞ւմ եք...

Այո՛, լսում ենք, ծեծում են վագոնների դռները և գոռում՝ ջո՛ւր, ջո՛ւր:

Իսկ ինչպե՞ս են ապրում:

Ապրում են: Իսկ ովքեր հրաժարվում են ապրելուց, իջեցնում են... այսպես որ գնա, կեսը տեղ չի հասնի...

Մահանո՞ւմ են:

Երևի:

Ու տեսնելով երևի, որ իրենցից մեկը մոտենում է, գոռում է.

Ջուր չի տրվում, ջուր չկա՛: Ու շրխկոցով փակում է դուռը:

... Այդ երկու օր առաջ էր, իսկ այսօր Թայչարուխցի Օթելլոն գլուխը խոթեց դույլի մեջ՝ երևի մի կաթիլ թացություն կամ սառնություն որսալու: Բան դուրս չեկավ: Արդեն երեք հիվանդ ունենք: Մի լիտրի չափ ջուր է պահել ավագը մյուս դույլի հատակում: Նա թացում է մաքուր թաշկինակը ջրով և ամեն անգամ քսան-քսանհինգ կաթիլ կաթեցնում հիվանդների բորբոքված լեզուներին: Մեկը դա համարում է պեդանտիզմ: Հասնում ենք, ըստ երևույթին, մի մեծ կայարան: Շոգ է: Մենք խնդրում ենք դուռը բանալ և թարմ օդ ներս թողնել: Մեր խնդիրը հարգվում է, բայց դա քիչ է օգնում: Շոգ է: Շոգն ավելի է զգացնել տալիս իր առկայությունը, երբ լսում ես վագոնների դռների թակոց և «ջո՛ւր, ջո՛ւր»

աղաղակները: Երևացին մի քանի թեթև պատգարակներ, թեթև եկան, ծանր գնացին: Իսկ մեկին տարան պարզապես երկու հոգով բռնած գլխից և ոտներից: «Ջո՛ւր, ջո՛ւր»:

... Հիմա մենք էլ ենք գոռում, մենք էլ ծեծում ենք դուռը, հայհոյում բոլոր հայտնի և անհայտ ուղղություններով: Մենք էլ մեզ տրված ձուկը շպրտեցինք դուրս, որովհետև, ինչպես հայտնի է, ինչպես կենդանի ձուկը, այնպես էլ աղի ձուկը չեն կարող ապրել առանց ջրի: Սա ի՞նչ կայարան է: Օ՞մսկ, Տո՞մսկ: Սողում են երկաթ գծի լայնքով պատգարակները, ըստ երևույթին, բոլոր վագոնների դռները բաց են, ջուրը օդով փոխարինելու հում... հում... հումանիտար ձգտումով: «Ջո՛ւր, ջո՛ւր»: Թվում է, թե հրդեհ է, մարդիկ այրվում են բոցերում ու վերջին մոլուցքով «ջո՛ւր, ջո՛ւր» են աղաղակում: Հետո խուլ ու աղիողորմ, ասես ծարավից, ճչում է սուլիչը: Վագոնների դռները նորից փակվում են, շարժվում է գնացքը և խլացնում տագնապահար կանչերը, մինչև հաջորդ կայարանը: Սկսվում է նույն պատմությունը, նորից բացվում են վագոնների դռները, ետ ու առաջ են վազում մարդիկ պատգարակներով, և ջուր խնդրող, պահանջող ձայներն ավելի խլացուցիչ են դառնում, ավելի տագնապահար: Ու քանի անցնում են ժամերը, օրերը, կայարանները, այնքան ավելի գազազում ենք մենք ու կորցնում մեզ: Մենք ամեն ինչ զգում ենք, ամեն բան մտածում, բայց ոչ ոքի մտքով չի անցնում վերցնեք դույլը և վազել դեպի կայարան: Թող կրակեն, թող գնդակահարեն, ավելի լավ է մեռնել փրկարար ջրի ազատարար ճանապարհին, քան մահանալ վագոնում, տաք ավազին նետված անլեզու, համր ձկան նման: Ջո՛ւր տուր, լայնատարած ու հարազա՛տ երկիր, քո խոնարհ ու ծարավից մեռնող թշվառական զավակներին, օվկիանոսնե՛ր են լվանում քո անծայրածիր ափերը, ծովերով ես հարուստ ու լճերով, գետերով ու սառնաջուր աղբյուրներով, մի՛ զլանա նրանց քո ջուրը, չէ՞ որ դեռ բոլորիս հայրն է ասել՝ «Մարդն ամենաթանկ կապիտալն է...»:

... Դուք ձեր գլխի ճարը տեսեք, ես հիմա մեռնում եմ, և ինձ տանում են երկու հոգի՝ գլխիցս ու ոտներիցս բռնած: Ով որ գլխիցս է բռնել, ոչինչ, գանգատավոր չեմ, բռնել է գլխիցս ու քայլում է մարդավարի, նույնը չի կարելի ասել նրա

մասին, ով ոտներիցս է բռնել. այս մեկը պետք է որ հետաքրքիր մարդ լինի. նա երևի բնախոսական փորձ է կատարում նվաստիս վրա: Այս անձնավորությունը երևի մտադրություն ունի բժշկական դիսերտացիա պաշտպանելու: Նա պարզապես խտուտ է տալիս աջ ոտիս կրունկը՝ ստուգելու համար, երևի, թե ծարավից մեռնողը կարո՞ղ է ծիծաղել, թե ոչ... Մի՛ փորձեք ինձ համոզել, որ այդ ինձ միայն թվում է, ոչ, նա ամենայն լրջությամբ՝ խը՛-տո՛ւտ...

Յատուկ Պոէմ